



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Խորհրդարանական համակարգի բարիքները

Հայաստանի Հանրապետության՝ ապրիլի 2-ին կայանալիք ԱԺ ընտրությունների քարոզարշավի ժամանակաշրջանը մոտենում է կեսին: Անցած օրերի ընթացքում Հայաստանի քաղաքական դաշտը թեժացել է, շռայլվում են խոստումներ, հեռակարային պլաններ, ինքնաարդարացումներ, քննադատություններ, չարածներն են պախարակվում եւ դարձյալ խոստումներ, խոստումներ...

Ընդհանուր հայացքով քաղաքական կուսակցությունների եւ դաշինքների ծրագրերը դիտարկելով եւ ի մի բերելով բոլորի ասածը՝ հասկանում ենք, որ ինչքան բան կա անելու եւ ինչքան բան դեռեւս չի արվել: Իսկ իր արածի մասին համարյա ոչ մի կուսակցություն չի խոսում:

Այստեղ թերեւս հպարտանալու տեղ ունի Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, քանի որ անցած 25 տարիներին իր ջատագոված եւ այդ ուղղությամբ համառորեն պայքար մղած խորհրդարանական համակարգը փաստորեն իրականություն է դառնում: Իրոք, քաղաքական դաշտում կարծես թե «իշխանությունը» չի կշռվում: Բոլորն անխտիր խոսում են փոփոխություններից: Ըստ երեւոյթին բոլորը դժգոհ են նախկին համակարգից եւ համակարգի հետեւանքով ժառանգված «ամեն ինչ հաղթողին, ոչինչ պարտվողին» սկզբունքից:

Փոփոխության ալիքն այնքան է մեծանում, որ գործնականում վերածվել է իշխանափոխության: Ոչ միայն նախորդ իշխանությունների տխրահռչակ կիսաքրեական դեմքերը չեն երեւում բեմահարթակներում, այլ նաեւ ջրի հատակ են անցել երիտասարդ խոստումնալից կադրերը: Փաստորեն, համակարգի փոփոխությամբ իրոք տեղի է ունեցել իշխանափոխություն: Այս իշխանափոխության հովվույթին մասնակից են բոլորն անխտիր, բոլոր նրանք, ովքեր հրապարակավ պահանջում են այսինչի կամ այնինչի հեռանալը, նրանք, որ կարծես թե ատամներով կառչած էին աթոռներից եւ չէին ուզում մի փոքր զիջել, ինչպես նաեւ նրանք, որ քաղաքական ճիշտ հաշվարկների արդյունքում, հաստատակամ եւ կայուն կեցվածքով քաղաքական լուծումներ առաջարկեցին եւ իրականության մեջ հաղթող դուրս եկան: Այդ քաղաքական լուծումը Սահմանադրական փոփոխություններն էին եւ խորհրդարանական համակարգին անցումը:

Ի շնորհիվ անցմանը խորհրդարանական համակարգին՝ բոլոր այն քաղաքական ուժերը, ովքեր անօգուտ էին համարում խաղաղ ճանապարհով իշխանափոխությունը, այսօր պայքարում են խորհրդարանում տեղ ունենալու համար: Նույնիսկ քաղաքացիական շարժումներին միացած այն երիտասարդները, որոնք «զզված» էին քաղաքական կուսակցություններից, այսօր ներգրավվել են քաղաքական դաշտում: Ուրեմն, հիմնական խոչընդոտը համակարգն էր, ոչ թե քաղաքական կուսակցությունները, ախտը «ամեն ինչ հաղթողին, ոչինչ պարտվողին» անհեռանկար եւ փակուղուն դեմ հանդիման կանգնեցնող մոտեցումն էր:

Հայաստանը քաղաքական վերելք է ապահովում այս խորհրդարանական ընտրություններով:

Քաղաքական զարգացման ուղին հստակեցված է այլեւս. Հայաստանը քաղաքական զարգացման ուղի է որդեգրել, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր պետականության զարգացման համար:



### Հաշվարկով լավություն՝ զոհված զինծառայողի ընտանիքին

Ապրիլյան պատերազմը չենք մարսել ու չենք էլ մարսելու. պարզապես մարսելու բան չէ: Չոհված տղերքից բոլորին, թվում է, անձամբ ենք ճանաչել: Ապրիլյան պատերազմում զոհվածների մայրերի աչքերին նայել չեմ կարողանում, որովհետեւ այնտեղ ինձ, մեզ եմ տեսնում՝ ճիշտ անկյան տակ:

Ապրիլի 2-ին ընտրություններ են ընտրելու հնարավորություն ունենք: Օֆշորային սկանդալի գլխավոր հերոսներից մեկը՝ Միհրան Պողոսյանը, կատարել է իր ընտրությունը՝ զոհվածների մայրերն են: Միհրան Պողոսյանն ապրիլյան պատերազմում հերոսացած Բագրատ Ալեքսանյանի մորը տարել է իր քարոզարշավին եւ բեմ հրավիրել՝ նրանից շնորհակալություն լսելու, իր վարկանիշը բարձրացնելու՝ նրանց ցավն ամոքողի դեմքի լուրջ արտահայտությամբ, գլուխը տմբտմբացնելով ու ծափահարելով: Չոհված զինծառայողի մորը չեն ծափահարում. կա՛մ նրան հանգիստ են թողնում, կա՛մ կողքին են լինում լուռ:

Չոհված զինծառայող Բագրատ Ալեքսանյանի մայրը բեմ է բարձրանում ու դողդողացող ձայնով ասում, թե շնորհակալ է Պողոսյանին, որ իր ընտանիքի կողքին է եղել: Չոհված զինծառայողի մորից չպետք է շնորհակալություն սպասել. ես ու դու պետք է նրան շնորհակալ լինենք: Չոհվածի մոր դողդողացող ձայնը, հուզմունքից ու ցավից բառերը հազիվ իրար կապելը, կցկտուր խոսքը չպետք է հրապարակային դարձ-

նենք, եթե նա որդու սիրանքի մասին չի պատմում: Նրա շնորհակալությունը հրապարակային դարձնելը իմ ու քո թուլություն մասին է խոսում, հաշվարկով լավություն անելու տմարդության մասին:

Պետք է զոհված զինծառայողի ընտանիքի կողքին լինել՝ հետո դա մատնացույց անելու համար, որովհետեւ տղերքը հաշվարկով չէն զոհվել, որովհետեւ նրանց միակ հաշվարկը մի թիզ հող պահելն է եղել: Չոհվածի ընտանիքին լավություն անելը բիզնեսի կամ օֆշորային գործերի սկզբունքով հաշվարկ անելու հարցում մի փոքր սխալվել եք. թվերն այստեղ կարելու չեն, կարելու օրերն են՝ ապրիլի 1-4: Մի հարցում ժամանակին ճիշտ հաշվարկ կարող էիք անել. եթե այդ օրերին տղերքի կողքին լինեիք՝ առաջին գծում, գուցե զոհերի թիվն ավելի քիչ լիներ: Կրակել պետք է սահմանին՝ հակառակորդի ուղղությամբ:

Չոհված զինծառայողի մայրն իմ մայրն է, նաեւ՝ քոնը: Չոհվածի մայրն ամեն առավոտ արթնանում ու կիսատություն է զգում, որը ընտրությունից ո՛չ առաջ, ո՛չ էլ հետո չի լցվելու, այդ տեղն առհասարակ բաց է մնալու, ավելին՝ ընտրությունից ընտրություն բաց տարածության հատակն ավելի լավ է երեսալու:

Ապրիլի 2-ին ընտրություններ են ընտրելու հնարավորություն ունենք, իսկ զոհված զինծառայողի մորն ընտրության հնարավորություն չի

տրվել. նրա ընտրությունը որդին է կատարել՝ վայրկենական որոշում կայացնելով, ու ոչ թե գալիք 4 տարվա, այլ ավելի մեծ ժամկետի համար, որը թվերի չի վերածվում:

Չոհված զինծառայող Բագրատ Ալեքսանյանի մայրը ձերձերձ հաշվարկով լավությանն առանց հաշվարկի է շնորհակալություն հայտնում: Չոհվածի մոր համար բանակից տուն վերադարձող որդու սպասումը ոչ իր հաշվարկով ընդհատվելուց հետո ուրիշ ոչ մի հաշվարկ չկա, կա միայն ամսաթիվ՝ ապրիլի 2, երբ զոհվեց տղան: Ապրիլի 2-ը Միհրան Պողոսյանի համար էլ կարելու օր է՝ պաշտոն ստանալու հնարավորություն կա:

Չոհված զինծառայողի մորը քարոզական նպատակներով օգտագործելն ընտրակաշառք է, բայց ոչ թե 5000-10000 դրամի տեսքով, այլ ավելի էժան, այնքան էժան, որ եթե այն վերցնենք, դրանով ոչինչ գնել չենք կարող, բայց գրպաններիս ծանրությունից էլ ազատվել չենք կարող: Անգամ եթե մերկ ենք, աչ ու ձախ կողմերից ինչ-որ բան ներքե՛լ գետնին է քաշելու ու ստիպելու՝ նախ կռացած քայլել, հետո արդեն սողալ՝ ծանրությունը կողքերից քարշ տալով: Թվերն ու մեր հաշվարկներն այստեղ մեզ չեն փրկի. սողալիս կարելու կենսական կարելու օրգանները գետնին քսվելուց մի քիչ ավելի ուշ մաշելու մասին մտածելն է: Չնայած, մեկ է, ամբողջ Հայաստանը դարուփոս է:

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



### ՀՀԴ նախընտրական ծրագիր

Նոր սկիզբ, Արդար Հայաստան, Պատասխանատու պետություն, Համերաշխ հասարակություն, Հայ Յեղափոխական Դաշնակցություն

Կարդացեք «Ապարամ»-ի հավելվածում

# Պատերազմը կանխելու միակ ձեռքը պատրաստ լինելն է թշնամու կողմից ցանկացած հավանական քայլի



Պաշտոնական երեւանը վերջին օրերին փորձում է քաղաքական-դիվանագիտական ջանքեր գործադրել Արցախի դեմ Ադրբեյջանի ռազմական ագրեսիան զսպելու եւ նոր պատերազմի սպառնալիքը չեզոքացնելու ուղղությամբ: Վերջին մեկերկու շաբաթների ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, արտգործնախարարը, պաշտպանության նախարարը տարբեր առիթներով, այդ թվում նաեւ՝ միջազգային հարթակներում բարձրաձայնել են խնդրի մասին՝ ըստ էության միջազգային գործընկերների ահազանգելով դարաբաղյան ճակատում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակի մասին եւ կոչ անելով ճնշում գործադրել ադրբեյջանական կողմի վրա՝ կանխելու լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսումը: Սերժ Սարգսյանը նման հայտարարություններ է արել մասնավորապես «Ֆրանսսպրես» գործակալությանը տված հարցազրույցում: Ադրբեյջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը իր հերթին Մոսկվայում հայտարարել է, թե Հայաստանի հետ բանակցությունները դարաբաղյան հարցի շուրջ կատարված են:

Ինչպե՞ս կգարգանա իրադրությունը դարաբաղյան հարցի շուրջ, հայկական կողմին կհաջողվի՞ քաղաքական միջոցներով նվազեցնել ռազմական լարվածությունը արցախյան ճակատում: Թեմայի շուրջ «Առաջին լրատվական»-ի գրուցակիցն է ՀՀ-ի Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյանը:

**- Պարոն Մանոյան, կհաջողվի՞ արդյոք կանխել նոր պատերազմը, այս հայտարարություններն ի՞նչ նպատակով են արվում:**

- Հայտարարություններն նպատակն

այն է՝ ինչ ասում են, այսինքն՝ դիմել միջազգային ուժերին, բայց թե ինչի կհանգեցնի իրավիճակը, դժվար է կանխատեսել: Կարծում եմ՝ եթե Ադրբեյջանը ոչ թե 100, այլ թեկուզ 55 տոկոսով վստահ լինեն, որ կհաղթի պատերազմը, ապա կսկսեն այն: Այդ ինքնավստահությունը չունի, դրա համար էլ չի սկսում: Իսկ այն, որ բանակցային գործընթացը սառեցված է, իրականում այդպես էր նույնիսկ նախորդ տարվա ապրիլից առաջ: Ադրբեյջանը շարունակում է հետեւել իր ոչ կառուցողական մոտեցմանը բանակցությունների ընթացքում: Կարծում եմ, որ անհրաժեշտ է ճնշում բանեցնել Ադրբեյջանի վրա հետեւյալ քայլերով:

- ստորագրել Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների միջեւ ռազմաքաղաքական համագործակցության համաձայնագիրը: Դա ինչ-որ տեղ կնշանակի, որ Հայաստանը մի քայլ էլ ավելի բարձրացրել է Արցախի ճանաչման մակարդակը:

Այդ քայլով նաեւ դիմել այլ պետություններին, որպեսզի նրանք եւս առնվազն Հայաստանի չափ ճանաչեն Արցախի Հանրապետությունը: Անպայման չէ, որ դրանք լինեն խոշոր պետությունները, որոնք շահեր ունեն մեր տարածաշրջանում:

Ճանաչումը տարբեր մակարդակներ ունի եւ տարբեր ձեւերով է դրսևորվում, հետեւաբար՝ ճիշտ չենք համարում ասել, թե Հայաստանը չի ճանաչում կամ Հայաստանի կողմից ճանաչումը նշանակում է պատերազմ: Հայաստանը որոշ քայլեր արել է ճանաչման ուղղությամբ, որի նման թեթ այլ պետություններ էլ անեն, դա արդեն ճնշում կլինի Ադրբեյջանի վրա՝ ստիպելով ավելի լրջանալ: Օրինակ, Հայաստանում կա Արցախի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն, որը որպես դիվանագիտական կարգավիճակ՝ նույնն է, ինչ դեսպանությունները: Եվ ուրեմն, եթե այլ պետություններ եւս նման քայլեր սկսեն ձեռնարկել նաեւ Հայաստանի դիմումով, դա ավելի մեծ ճնշում կլինի Ադրբեյջանի վրա, որպեսզի լրջանա բանակցային գործընթացում: Իսկ եթե չլրջանա, ինքը գիտի: Եթե այդ գործընթացը շարունակվի, կարող է լինել այնպես, որ մի շարք պետություններ ճանաչեն Արցախը, եւ այդ ձեւով հարցը համարենք իրավականորեն լուծված:

**- ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Ստեփանակերտում ասել էր, որ մինչեւ տարեվերջ մեկ պետություն կարող է ճանաչել Արցախի անկախությունը: Կարծում եք՞ իրական հիմքեր կա՞ն դրա համար:**

- Չգիտեմ՝ նախարարը ո՞ր երկիրը

նկատի ուներ, բայց կարծում եմ՝ անհրաժեշտ է, որ Հայաստանը ցույց տա՝ ինքն էլ է քայլ կատարում դեպի ճանաչում: ՀՀ նախագահը արդեն հայտարարել է այդ մասին եւ հանձնարարել արտգործնախարարությանը՝ պատրաստել Արցախի հետ պայմանագիրը ապրիլյան իրադարձություններից հետո: Ըստ երեւույթի, այն պատրաստ է, բայց սպասվում է ինչ-որ հարմար պահի: Կարծում եմ, որ հարմար պահը արդեն կար անցյալ ապրիլին: Եվ եթե Ադրբեյջանը, մեղմ ասած, ապակառուցողական վարքագիծ է ցույց տալիս, համաձայնություն չի տալիս հիմնախնդրի կարգավորման հետ համեմատած՝ շատ պարզ քայլերի իրագործմանը, ինչպիսին է, օրինակ, շփման գծում վերահսկողական մեխանիզմների ներդրումը, ապա ի՞նչ կարիք կա սպասելու այլ առիթի: Պետք է անպայման քայլեր ձեռնարկել, որ Ադրբեյջանը զգա ճնշում իր վրա, իսկ նշված քայլը ամենաճիշտն է:

**- Ի՞նչն է այսօր խանգարում, որ ՀՀ-ն Արցախի ճանաչման գործընթաց սկսի:**

- Մեր տեսանկյունից՝ խանգարող հանգամանք չկա: Այդ հարցը պետք է ուղղեք արտգործնախարարությանը կամ նախագահականին:

**- Այսինքն՝ սրա՞նք են պատերազմը կանխելու գործիքները:**

- Պատերազմը հնարավոր չէ կանխել միայն քաղաքական գործիքներով: Պետք է պատրաստ լինենք պատերազմի: Ուրիշ ձեւ չկա: Իմ ասածն այն է, որ հարկավոր է սայլը տեղից շարժել բանակցային գործընթացում, Ադրբեյջանի վրա ճնշում պետք է լինի: Պատերազմը կանխելու միակ ձեռքը պատրաստ լինելն է թշնամու կողմից ցանկացած հավանական քայլի: Զաղաքական միջոցները կարող են նպաստել, որ միջնորդները՝ Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, Ռուսաստանը, հայտարարություններ անեն, որ՝ «Ադրբեյջան, խելոք մնա»: Դա, բնականաբար, կունենա իր ազդեցությունը, բայց եթե Ադրբեյջանը վստահ լինի, որ հաղթելու է պատերազմը, կսկսեն պատերազմը՝ անկախ նրանից, թե քանի պետություն է հայտարարություն արել:

**- Այդ դեպքում՝ ինչո՞ւ է ադրբեյջանական կողմը վերջին մի քանի ամիսներին հետևողականորեն սրում իրադրությունը:**

- Ադրբեյջանը մշտապես սրում է իրադրությունը որեւէ հավանական հանդիպումից առաջ: Ինչն է միսսիլի խմբի համանախագահների հետ հանդիպումները, նրանց այցելությունները տարածաշրջան կամ երկու երկրների արտգործնախարարների հանդիպումը: Ամեն անգամ, երբ միջնորդները փորձում են ինչ-որ բան

անել, Ադրբեյջանը փորձում է ցույց տալ, թե՛ «ես դժգոհ եմ»: Մյուսն էլ՝ ներքին սպառնալիք համար ցույց տալու, թե՛ «տեսեք, ինչ-որ բան անում ենք»: Բայց վերջին անգամ, կարծում եմ, բավական ուժեղ ապտակ ստացան, եւ դա հակառակ արդյունքն ունեցավ:

**- Եվս մի հարց՝ ավելի շատ կապված ներքաղաքական իրադարձությունների հետ: Աժ նախընտրական քարոզարշավին մասնակցող քաղաքական ուժերից մեկը (գիտե՞ք, թե ում մասին է խոսքը) սկսել է բացահայտորեն հող հանձնելու քարոզչություն անել՝ ասելով, թե դարաբաղյան հարցում պիտի գնանք խաղաղության, փոխզիջումների եւ այլն, եւ այլն: Ծի՞շտ եք համարում այս մոտեցումը ներկա իրավիճակում:**

- Խոսքը, բնականաբար, ՀԱԿ-ի մասին է: Երկու կարեւոր խնդիր կա՝ կապված իրենց մոտեցման հետ: Նախ, իրենց այն մոտեցումը, որ միջեւ Դարաբաղի հարցը չկարգավորվի, երկրի ներսում հարցերը չեն կարգավորվի, շատ սխալ մոտեցում է: Նրանք տարբեր անուններով կուսակցություններ ունեցած ժամանակ հետեւել են այդ մոտեցմանը, այդ պատճառով էլ Դարաբաղի խնդիրը բեռ են համարել Հայաստանի զարգացման համար: Մենք դեմ ենք այդ մոտեցմանը: Դարաբաղի հարցը կարգավորվելու դեպքում էլ Հայաստանում կոռուպցիան չի վերանա, օլիգարխիկ համակարգը չի վերանա: Ընդհակառակը, եթե այդ հարցերը լուծենք Հայաստանի ներսում, կիշխանենք Արցախի հարցի կարգավորումը, որովհետեւ կլինենք շատ ավելի ուժեղ պետություն: Սա մոտեցման սկզբունքային տարբերություններից մեկն է:

Երկրորդը, իրենց այնպես են խոսում, որ կարծեք Ադրբեյջանի նախագահը գիշերը չի քնել, սպասում է առավոտը բացվի եւ հայկական կողմն ասի՝ արի ստորագրենք հաշտության պայմանագիրը: Այդպես չէ: Մենք մեր գործընկեր նախագահից դժգոհ ենք, որ շատ է այս հարցի մասին խոսում, իսկ իրենք ասում են՝ այո, շատ է խոսում, բայց անկեղծ չի: Խելքին մոտ բաներ չեն ասում՝ անկախ նրանից, թե ինչպես են պատկերացնում հարցի լուծումը:

Կարծում եմ՝ իրենց ճիգն այն է, թե հասարակության մեջ կլինի բնակչության մի քանի տոկոս, որը ցանկանում է խաղաղություն ամեն գնով: Կարծում եմ՝ բոլորն են խաղաղություն ուզում, բայց ոչ՝ ի գին ամեն ինչի: Եվ իրենք փորձում են այդ շերտի վրա կենտրոնանալ:

Արամ ՍԱՐԳՍՅԱՆ  
1in.am

# ՀՀ-ն միակ կուսակցությունն է, որի նախընտրական ծրագրում կա ջախտաբարությանը աջակցելու խնդիր

ՀՀ ԱԺ հորհրդարանական ընտրությունների նախաշեմին Ջավախքի խնդիրները բարձրաձայնելու եւ հետագա համագործակցության եզրեր փնտրելու նպատակով Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի անդամները հանդիպելու են ընտրություններին մասնակցող կուսակցությունների ու դաշինքների հետ:

Այսօր խորհրդի անդամները հանդիպել են ՀՀ-ի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը բարձրաձայնվել են ջախտաբարությանը հուզող կրթական, սոցիալ-տնտեսական, առողջապահական, հոգեւոր, մշակութային, ինչպես նաեւ քաղաքական խնդիրներ: Հատկապես կարեւորվել է Ջավախքում թուրքադրբեյջանական ակտիվությունները:

Խորհրդի անդամների կարծիքով՝ այսօր, հաշվի առնելով մի շարք հանգա-

մանքներ, լուրջ ուշադրություն պետք է դարձվի վիրահայությանը եւ ջախտաբարությանը հուզող խնդիրներին:

«Ջավախահայերի խնդիրները բազմազան եւ բազմադիրտ են, հատկապես Սամցխե-Ջավախքում եւ Զվեմո Զարթիվում կան կրթական, սոցիալ-տնտեսական, առողջապահական, հոգեւոր, մշակութային, ինչու չէ՞ նաեւ քաղաքական խնդիրներ, սակայն ամենակարեւոր հանգամանքը թուրք-ադրբեյջանական ակտիվությունն է Վրաստանում եւ, մասնավորապես, վերջին շրջանում Ջավախքում: Խորհուրդը դա դիտարկում է ՀՀ անվտանգության տեսանկյունից, ինչու չէ՞ նաեւ Հայաստան-Վրաստան հարաբերությունների համատեքստում: Ես կարծում եմ՝ Դաշնակցությունը մեծ պոտենցիալ ունի, որ կարողանա իր աշխարհասփյուռ կառույցներով

կանգնել եւ պետք է կանգնի ջախտաբարությանը հուզող բոլոր խնդիրները ժամանակին եւ պատշաճ ձեւով լուծելու համար»,- նշեց Սամցխե-Ջավախքի եւ Զվեմո Զարթիվի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի համակարգող Արտակ Գաբրիելյանը:

«ՀՀ-ն միակ կուսակցությունն է, որի նախընտրական ծրագրում կա ջախտաբարությանը աջակցելու խնդիր. մենք դա դիտում ենք որպես հայ-վրացական հարաբերությունների սերտացման բոհի մեջ: Այդ հարաբերությունների սերտացման պարագայում կիշխանա Ջավախքի հայության եւ ընդհանրապես վիրահայության խնդիրների մեծ մասի լուծումը: Այս հանդիպմանը մենք ներկայացրեցինք մեր պատկերացումները, իրենք հարցեր ունեին, մենք

իրենց հարցեր ունեինք իրավիճակի մասին, եւ կարծում եմ՝ իրենք էլ գոհ են, որ հանդիպումը տեղի ունեցավ: Հիմնականում կրթության խնդիրներն էին, բայց անշուշտ, կան նաեւ սոցիալ-տնտեսական հարցեր, որոնք՝ եթե ոչ անպայման կուսակցությունները կարող են լուծել, վաղը խորհրդարանը կարող է այդ ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկել, այսինքն՝ Հայաստանի հարաբերությունների սերտացումը Վրաստանի հետ կնպաստի նաեւ այդ խնդիրների կարգավորմանը: Պարզ էր, որ մեր մոտեցումները իրենց համար հոգեհարազատ էր, քանի որ առաջին օրը չէ, որ մենք զբաղվում ենք Ջավախքի հարցերով»,- ընդգծեց ՀՀ-ի Բյուրոյի անդամ, Հայ Դատի կենտրոնական գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը:

arfd.am

# Ադրբեջանական տեղապտույտ «հոջալու» կոչվող քարոզչական տիղմում



Կարծում եմ՝ հպանցիկ քննական հարցազրույց անգամ բավական է, որպեսզի անմիջապես պարզ դառնա՝ ադրբեջանական քարոզչամեթոդները, իրոք, տեղապտույտի մեջ է նախկին հոջալու եւ Աղդամ, ներկայիս Իվանյան եւ Ալևա բնակավայրերի միջակայքում 1992թ. փետրվարի 25-26-ին տեղի ունեցած իրադարձությունների մատուցման հարցում: Ընդ որում՝ տեղապտույտն այդ անընդհատ է եւ անելանելի: Անելանելի է, քանզի քառորդարյա այդ իրողությունների ողջ համապատկերը շարունակաբար դիտարկվում է ոչ այլ կերպ, քան միեւնույն ծուռ հայելու մեջ: Թեկուզ Բաքվում հստակ գիտակցում են, որ բավական է փոխել այդ ծռմուկը հայելին, ապա իսկույննեւթ իրական տեսք կստանան թե բուն դեպքերը եւ թե բոլոր այն մասնակիցները, ովքեր անմիջականորեն են կամ հեռակա կարգով դերակատարություն են ունեցել դրանց ընթացքում, մանավանդ՝ նրանք, ովքեր պատասխանատու են այդ դեպքերի ողբերգական հետեւանքների համար: Իսկ որ հետեւանքներն այդ, իրոք, ողբերգական էին, կարծում եմ՝ աներկբա է, քանզի իրագործվել է ոճիր եւ արյուն է հեղվել՝ խաղաղ մարդկանց արյուն, առանց սեռի ու տարիքի խտրականության: Բայց ովքեր են իրական ոճրագործները: Ահա հենց այդ էական հարցի դիմաց է, որ դրված է ադրբեջանական քարոզչամեթոդների ծուռ հայելին:

Նախ՝ պատմական անդրադարձ: Խոջալուն Ստեփանակերտ քաղաքին հարակից բնակավայր էր: Մինչեւ անցյալ դարի 60-ական թվականներն այն հայկական փոքրիկ գյուղ էր: Ինքնավար մարզում ժողովրդագրական իրավիճակը փոխելու նպատակով հանրապետության իշխանությունները հետեւողականորեն այն վերաբնակեցնում էին հարակից շրջաններից բերված ադրբեջանցի գյուղացիներով, որի արդյունքում շատ շուտով բնիկ հայերը դուրս մղվեցին գյուղից եւ խոջալուն դարձավ բացարձակապես ադրբեջանաբնակ: Ի լրումն՝ 80-ականների վերջերին Բաքուն մի նոր թափ հաղորդեց խոջալուի վերաբնակեցմանը՝ այդտեղ բերելով, մասնավորապես, Ուզբեկստանի Ֆերգանայի հովտից Ադրբեջանում ապաստանած թուրք-մեսիսեթցի փախստականների՝ նպատակ ունենալով խոջորացնել այն եւ քաղաքի կարգավիճակ տալ բնակավայրին:

Միեւնույն ժամանակ, խոջալուն վերածվել էր հզոր ռազմական հենակետի, որտեղից Ադրբեջանի զինված ուժերը 1991-ի գարնանից սկսած «Ալազան», «Կրիստան» եւ «Գրադ» կայանքներից օրնիքուն հրետակոծում ու հրթիռակոծում էին Ստեփանակերտ քաղաքը, Ասկերան շրջկենտրոնը, հարակից հայկական գյուղերը: Այդտեղ բերված ադրբեջանական ՕՍՕՆ-ի միլիցիայի հատուկ նշանակության ջոկատայինները եւ Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության գրոհայինները մերձակա հայկական բնակավայրերի

դաշտերից առեւանգում էին հարյուրավոր հայ գյուղացիների, պատանդ պահում կամ սպանում նրանց, քշում, տանում հազարավոր խոշոր եւ մանր եղջերավոր անասուններ: Բացի այդ՝ այդտեղ գտնվող ադրբեջանական ստորաբաժանումները խստիվ վերահսկում էին մերձակա օդանավակայանը՝ պատնեշելով Հայաստանի հետ ցամաքով խստիվ շրջափակված Արցախի միակ օդային միջանցքը:

Շարունակվող շրջափակման, մեծ թվով փախստականների առկայության, վառելիքի, սնունդամթերքի, դեղորայքի բացակայության, ձեռնարկությունների հարկադրված պարապուրդի, միջըջանային ճանապարհների պաշարվածության պատճառով իրավիճակը հետզհետե ավելի ու ավելի էր վատթարանում նորահռչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, առանձնապես՝ մայրաքաղաք Ստեփանակերտում: Ուստի եւ՝ օդանավակայանի ապաշրջափակումը եւ խոջալուն հակառակորդի կրակակետերի վնասագործումը դարձել էին օրվա հրամայական: Խոջալուի ազատագրման եւ օդանավակայանի ապաշրջափակման ռազմական գործողությունը սկսվեց փետրվարի 25-ին՝ կեսգիշերին մոտ, եւ ավարտվեց հաջորդ օրվա առավոտյան կողմ: Ընդ որում, Արցախի ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումները հատուկ միջանցքներ էին թողել մարտական գործողությունների վայրից խաղաղ բնակիչների անվտանգ տարահանման համար՝ այդ մասին քանիցս նախապես իրազեկելով ադրբեջանական կողմին: Սակայն ադրբեջանական իշխանությունները ոչինչ չձեռնարկեցին խաղաղ բնակչությանը դուրս հանելու համար:

Մինչդեռ այն տարածքը, որտեղ հետագայում փետրվարի 29-ին եւ մարտի 2-ին, նկարահանվեցին սպանված խաղաղ բնակիչների դիակները, գտնվում է խոջալուից 11 եւ Աղդամից 3 կիլոմետր հեռավորության վրա: Այդ տարածքը, ընդհուպ մինչեւ 1993թ. ամառ, գտնվում էր ադրբեջանական զորամասերի մշտական վերահսկողության ներքո: Ուստի, բնականաբար, բացառվում էր արցախյան ստորաբաժանումների մուտքն այդ վայր:

Թե ի՞նչ է կատարվել այդ տարածքում, վկայում են թեկուզ հենց ադրբեջանական աղբյուրները: Ադրբեջանցի հեռուստաօպերատոր Չինգիզ Մուստաֆաեւի վկայությամբ՝ ինքը երկու անգամ նկարահանել է այդ դիակները՝ ընդամենը երկու օրվա տարբերությամբ: Նրա ֆիլմից ակնհայտ է դառնում, որ մինչեւ երկրորդ նկարահանումը որոշ դիակներ սաստիկ այլաձևակալվել են: Այդ օրը՝ մարտի 2-ին, նա նկատել է, որ գետնին ընկած դիակների դիրքերը եւ վնասվածքների ու վերքերի աստիճանը, առաջինի համեմատությամբ, ապշեցուցիչ փոխվել են: Եվ դա, կրկնում եմ, այն տարածքում, որտեղ մինչեւ հաջորդ տարվա ամառ լիովին վերահսկում էին Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության գրոհայինները: Ահա հենց այդ փաստն է, որ ադրբեջանական քարոզչամեթոդն թաքցնում է ինամբով՝ նպատակ ունենալով ստեղծել այն երեւութականությունը, թե իբր խոջալուի բնակիչներին սպանել է հայկական կողմը: Մուստաֆաեւն այդ մասին հայտնել է անձամբ հանրապետության Նախագահ Այազ Մուրադիբեկովին, ով մինչ այդ երեւի թե կռահում էր ողբերգության պատճառները: Նախագահը պատասխանել է. «Չինգիզ, ոչ ոքի խոսք անգամ չասես այդ մասին: Այլապես՝ բեզ կսպանեն»: Այնուամենայնիվ, տարակուսելով, թե այդ ամենը հայկական կողմն է արել, Մուստաֆաեւը սկսեց անկախ հետաքննություն տանել:

Սակայն այն բանից հետո, երբ նա Մուսկվայի «ДР-Пресс» (Գործնական Ռուսաստան-Պրես) լրատվական գործակալության միջոցով հաղորդագրություն հրապարակեց՝ առ այն, թե հնարավոր է՝ ադրբեջանական կողմը մասնակից է խոջալուցիների դեմ իրագործված ոճրագործությանը, լրագրողն Աղդամից ոչ հեռու մի վայրում սպանվեց անհայտ եւ առ այսօր չբացահայտված հանգամանքներում: Ի դեպ, հետագայում նույն ճակատագրին են արժանացել նաեւ բոլոր այն ականատեսները, այդ թվում՝ ադրբեջանցի դաշտային հրամանատարները, ովքեր քաջատեղյակ էին այդ ոճրագործության բուն իրողությանը:

Փաստորեն, նույնն է վկայել նաեւ չեխ լրագրողուհի Դանա Մազալովան, ով դարձյալ երկու անգամ այցելել է Աղդամի մերձակա այդ տարածքը եւ ականատես եղել դիակների վիճակի առեւտի տարբերությանը: Իրադարձություններից անմիջապես հետո՝ փետրվարի 29-ին, գալով այդտեղ, նա դիակների վրա վայրագության որեւէ հետք անգամ չի նկատել, բայց ահա երկու օր անց՝ մարտի 2-ին, նրան եւ մյուս լրագրողներին ցուցադրել են արդեն մաշկահան արված գլուխներով դիակները, որոնք հատուկ նախապատրաստված էին նկարահանումների համար:

Ուշագրավ է նաեւ Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մուրադիբեկովի վկայությունը, որ նա իր հրաժարականից երկու ամիս անց հայտնել է նույն Դանա Մազալովային տված եւ մուսկովյան «Նեգավիսի-մայա գազետա» թերթում հրապարակված հարցազրույցում: Խոսելով խոջալուի մասին, Մուրադիբեկը նշել է. «Ինչպես ասում են այն խոջալուցիները, ովքեր փրկվել են, դա կազմակերպվել է, որպեսզի պատրվակ լինի իմ հրաժարականի համար: Ինչ որ ուժ գործում էր նախագահին վարկաբեկելու համար: Ես չեմ կարծում, թե հայերը, ովքեր անչափ հստակ են բանիմաստ եւ վերաբերում նման իրավիճակներին, թույլ տալին, որպեսզի ադրբեջանցիները ստանան Ֆաշիստական գործողություններում նրանց մերկացնող փաստաթղթեր... Հայերը միջանցք էին թողել, որով մարդիկ կարող էին հեռանալ: Այդ դեպքում ինչո՞ւ պիտի նրանք կրակեին, մանավանդ այն տարածքում, որը մոտ է Աղդամին, որտեղ այդ ժամանակ բավական ուժեր կային, որպեսզի դուրս գային եւ օգնության հասնեին մարդկանց»: Գրեթե տաս տարի անց Ադրբեջանի գահընկեց նախագահին իր կարծիքը հաստատել է նաեւ ռուսական «Նովոյե վրեմյա» հանրային տված հարցազրույցում՝ ասելով. «Այնպես էր, որ խոջալուցիների գնդակահարությունը կազմակերպված էր ինչ որ մեկի կողմից՝ Ադրբեջանում իշխանությունը փոխելու համար»:

Խաղաղ բնակիչների ապահովելու միջանցքի իրողությունը հաստատել է նաեւ ադրբեջանցի լրագրող Էյնուլլա Ֆաթուլլաեւը, ով, որպես Բաքվի «Մոնիտոր» անկախ հանդեսի թղթակից, 2005թ. փետրվարին այցելել էր Արցախ՝ տաս օր մնալով այստեղ: Բաքու վերադարձից հետո նա գրել է. «Միջանցքը, իրոք, եղել է, այլապես շրջապատված եւ արտաքին աշխարհից մեկուսացված խոջալուցիները ոչ մի կերպ չէին կարող ճեղքել օդակը եւ դուրս գալ շրջապատումից: Բայց, հաղթահարելով Կարկաս գետի տեղանքը, փախստականների շարանը կիսվել է, եւ չգիտես ինչու խոջալուցիների մի մասն ուղղվել է դեպի Նախիջեւանիկ: Երեւում է, որ Ադրբեջանի ժողովրդական գումարտակները ձգտում էին ոչ թե ազատագրել խոջալուցիներին, այլ մեծ արյուն հեղել Այազ Մուրադիբեկին տապալելու ճանապարհին»:

Ինչպես հայտնի է, այն ժամանակ կարծես ազատահող լրագրող Ֆաթուլլաեւն այդ եզրահանգման համար տեւական ազատագրման դատապարտվեց: Իսկ երբ բանտային պայմաններում հարկ եղած «վերադաստիարակություն» ստանալուց հետո վաղաժամկետ ազատ արձակվեց ճաղերի ետեւից, այլեւս հետք անգամ չէր մնացել նրա վաղեմի ազատախոհությունից: Ահա տարիներ ի վեր Ֆաթուլլաեւը մասնակալիկ կարգավիճակով ղեկավարում է իշխանությունների աջակցությամբ իր հիմնադրած «Հաքքին.ազ» էլեկտրոնային լրատվական-վերլուծական կայքը, որի էջերում եռանդուն փառաբանում է ալիեյան իշխանությունը՝ հայտարարելով այն աշխարհի ամենաժողովրդավարականը, ամենամարդասիրականը, ամենաարդարը: Բնականաբար, միաժամանակ նա իր կայքի հրապարակումներում ամենայն կերպ պախարակում է Հայաստանը, Արցախը, առաջատարակ՝ հայ ժողովրդին, այդ թվում՝ պնդում է հայկական կողմի մեղավորությունը խոջալուցիների զանգվածային սպանության մեջ՝ որակելով այն որպես ցեղասպանություն:

Հատկանշական է, որ բոլորովին վերջերս Ֆաթուլլաեւը կազմակերպել է Այազ Մուրադիբեկի հատուկ հայտարարության հրապարակումը «Հաքքին.ազ»-ի փետրվարի 24-ի թողարկման մեջ՝ խոջալուի ողբերգության հերթական տարեդարձի կապակցությամբ: Պարզվում է, որ Մուրադիբեկը նման բան չի ասել չեխ լրագրողին, որ Դանա Մազալովան խեղաթյուրել է իր խոսքը եւ, որ վերջապես, հայկական կողմը փորձում է արդարանալ այդ արյունալի իրադարձությունների համար եւ զանգվածային կոտորածի մեղքը բարդել ադրբեջանական կողմի վրա:

Երեւի թե կարելի է ըմբռնումով մոտենալ Մուրադիբեկի վիճակին: Նա այլեւս վտարանդի չէ, Ադրբեջանի ներկայիս իշխանությունների ողորմածության շնորհիվ հայրենիք է վերադարձել մոսկովյան ապահով տարագրությունից եւ, վերահաստատվելով Բաքվում, իրականում յուրատեսակ պատանդի վիճակում է, ում ցանկացած պահի եւ ցանկացած մեղադրանքով նույն այդ բարեսիրտ իշխանությունները կարող են ճաղերի ետեւ նետել: Թեկուզ հենց խոջալուի իրադարձությունների համար եւ կամ, ինչո՞ւ չէ, իր իսկ նախաձեռնած եւ 1991-ի գարնանը խորհրդային զորքերի աջակցությամբ Արցախի հայաթափման նպատակով իրականացված «Օղակ» ռազմագործողության համար: Ընդ որում՝ վերջինս երկու տարբերակով կամ՝ ինչո՞ւ մինչեւ վերջ չի իրականացրել հայաթափման գործողությունը, եւ կամ՝ ի՞նչ բարոյական իրավունքով է նման հակամարդկային քայլի դիմել բարեկամ հայ ժողովրդի, Ադրբեջանի հայագահի քաղաքացիների դեմ: Չեն բացառվում, իհարկե, նաեւ դավադիր գնդակի կամ ճանապարհատրանսպորտային վթարի գործոնները: Այնպես որ, այլ կերպ չէր կարող ստել հայրենիքում ակամա պատանդի վիճակի մեջ հայտնված Այազ Մուրադիբեկը: Ուստի փորձենք հասկանալ նախկին նախագահին: Ի վերջո, ամեն ինչ սպասելի է բառիս բուն իմաստով անկանխատեսելի Ադրբեջանում: Ասենք թեկուզ՝ երբ ամուսինն իր սեփական կնոջը տեղապահ է կարգում ոչ թե տանը կամ, ավելի կոնկրետ, ամուսնական առաջատարում, այլ երկրի նախագահի բազմաթոռում: Միակ սպասելին եւ տեսանելին այդ երկրի քարոզչամեթոդների երկուսուկես տասնամյակ շարունակվող տեղապտույտն է «Խոջալու» կոչվող զուտ քարոզչական տիղմում:

### Բուհական կրթությունը կյանքին մերձեցնելու պահանջով

Ինչպիսի՞ն է այսօր կրթությունն Արցախում, ի՞նչ մասնագետների կարիք ունենք, համապատասխան՞ում է այն աշխատաշուկայի ներկայիս պահանջներին, բուհական կրթություն ստացածներն արդյոք աշխատող են իրենց մասնագիտությամբ: Այս և հարակից այլ հարցերի շուրջ մենք գրուցեցինք ԼՂԿ կրթության, գիտության և սպորտի նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ Լուսինե Ղարախանյանի հետ:

**- Տիկին Ղարախանյան, այսօրվա դրությամբ՝ քանի՞ ուսանող է սովորում Արցախի բուհերում:**

- Այսօրվա դրությամբ՝ 2225 ուսանող սովորում է Արցախի 6 բուհերում: Դա Արցախի պետական միջնակարգի և, Գրիգոր Նարեկացիի և Մեսրոպ Մաշտոցի հավատարմագրված համալսարանները, Հայաստանի ազգային ազդարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը, Շուշիի տեխնոլոգիական համալսարանը և Գյուլբյան կիրառական արվեստի ինստիտուտը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ Թամարա Զամալյանի անվան Բժշկական քոլեջում, Սայաթ Նովայի անվան Երաժշտական քոլեջում, Պարարվեստի քոլեջում, Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում, Մարտունու արհեստագործական ուսումնարանում, Շուշիի «Եզնիկ Սոզյան» արհեստագործական ուսումնարանում, Շուշիի հումանիտար քոլեջում սովորում է ընդհանուր առմամբ 1654 ուսանող: Սա բակալավորի մասին է, իսկ մագիստրատուրայում ուսանողների թիվը կազմում է 481:

**- Ի՞նչ մասնագիտությունների պահանջարկն աշխատաշուկայում:**

- Ցավոք, մենք աշխատաշուկայում մշտադիտարկում /մոնիթորինգ/ չենք իրականացնում: Հավանաբար, դա սոցալ նախարարության խնդիրն է: ՀՀ պետական բուհերում պետպատվերը մենք ձեռնարկում ենք նախարարությունների, վարչությունների, գերատեսչությունների հայտերի, ինչպես նաև անհատ դիմորդների դիմումների հիման վրա: Առաջին կիսամյակում մենք բոլոր գերատեսչություններին գրույթներ ենք ուղարկում, թե ինչ կարիքի պահանջարկ ունեն, և ըստ այդմ 60 անվճար տեղ ենք հատկացնում Հայաստանի պետական բուհերում: Դա հնարավորություն է ընձեռնում ՀՀ-ում հատկացվող տեղերի սահմանում ԼՂԿ շրջանավարտների համար ըստ նախապիտուկների տեղեր հատկացնել: Կնքում ենք պայմանագրեր ԼՂԿ համապատասխան գերատեսչությունների հետ, ովքեր պատվիրել են տեղերը, պայմանով, որ տեղերը վերադառնան ԼՂԿ-ում: Ունենք տվյալների բազա, որտեղ այդ տվյալները հավաքագրված են: Շատ հաճախ մեզ գանգահարում են և այդ ուսանողի տեղն են հարցնում ու աշխատանքի վերցնում: Չենք կարող ասել, որ խորհրդային տարիների նման պլանային ձևով ենք անում /կա որոշակի անկառավարելի վիճակ/, բայց հիմնականում՝ նաև արտասահմանյան բուհերում մենք կազմակերպում ենք այդ գործընթացը: Ունենք արտասահմանյան 16 վարկանիշային բուհերն ավարտածներ, որոնցից 5-ն է, որ տարբեր պատճառներով չեն վերադարձել մասնագիտությունը վերադարձել են և այժմ հասարակական տարբեր ոլորտներում կարիերա պաշտոններ են զբաղեցնում:

**- Ինչպիսի՞ մասնագիտություններ են այսօր պահանջված դպրոցներում:**

- Մի քանի տարի առաջ նախարարությունը համակարգային ուսումնասիրություն կատարեց մանկավարժական կարգերի պահանջվածությունը ստուգելու համար և հստակեցրեց նպատակային տեղերի անհրաժեշտությունը, որից հետո մենք, ըստ էության, դադարեցրինք արտոնագիր (լիմիտ) հասկացությունը: Այսօր Արցախում պահանջարկ ունեն բնագիտական առարկաների՝ մաթեմատիկայի, քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի մասնագետները: Կան համայնքներ, ուր օտար լեզվի մասնագետների կարիք կա, սակայն ավելի լուրջ խնդիր է մաթեմատիկա առարկայի մասնագետի խնդիրը. անգամ Ստեփանակերտում լավ կարգերի առումով դա խնդիր է: Ինչպես գիտեք՝ մրցույթների արդյունքում են մասնագետներն աշխատանքի ընդունվում: Եղել է մաթեմատիկա առարկայի մրցույթ, որի արդյունքում այդ կարգը չի բավարարել նախարարության պահանջները, քանի որ օրենքով ավագ դպրոցի ուսուցիչներին նախարարությունն է աշխատանքի վերցնում:

**- Կրթության, գիտության և սպորտի նախարարությունը կարողանո՞ւմ է հետեւել, թե ուսանողների քանի տոկոսն է ավարտելուց հետո աշխատում ըստ իր մասնագիտության:**

- Անկեղծ ասած՝ այդպիսի մոնիթորինգ չկա նախարարության կողմից, բայց տեղյակ եմ, որ հավատարմագրված բուհերն իրենց շրջանավարտների համար դիտարկում անում են: ՀՀ-ում կան կարիերայի կենտրոններ, որոնք հետեւողական աշխատանք են տանում իրենց շրջանավարտների պագան ուրվագծելու, հետագայում առաջարկել և նույն խնդիրը կա մեր հարեան երկրներում: Կա մոդայիկ մասնագիտությունների ցանկ. դա տնտեսագիտությունն է, իրավաբանությունն է, առաջին հայացքից ռոմանտիկ թվացող միջազգային հարաբերություններ մասնագիտությունն է, բայց աստիճանաբար այդ կարծրատիպերը կոտրվում են: Այստեղ կա մասնագիտական ճիշտ կողմնորոշման խնդիր, որին պետք է պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերվի դպրոցներում, այն էլ՝ սկսած ցածր օղակից: Ոչ ծնողը պետք է ընտրություն կատարի երեխայի փոխարեն և ոչ էլ երեխան վազի մոդայիկ մասնագիտությունների ետեւից, այլ հաշվի առնվի երեխայի ռեալ հնարավորությունները, դրանք հավասարակշռվեն հավակնությունների մակարդակի հետ: Ի վերջո, մասնագիտորեն կողմնորոշված երեխան անձնային ինքնություն է ապրում: Եթե ես գիտեմ՝ ով եմ ես, ինչ եմ դառնալու, եւ միայն ընդունվելուց հետո չեմ կռահել, որ սխալ ընտրություն եմ արել, իմ անձնային եւ հոգեբանական դաշտում խնդիրներ չեն առաջանում, բայց երբ ուշ եմ բացահայտում, արդեն անձի հոգեկան առողջության խնդիր կա:

**- Առաջիկայում ՀՀ «Մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ի/որի հետ մենք արդեն համագործակցում ենք/ մասնագետները կայցելեն Արցախ՝ մասնագետներ վերապատրաստելու: Վաղուց ժամանակն է, որ այդ գործով զբաղվեն պրոֆեսիոնալները: Մենք ունենք սոցիալական մանկավարժի խնդիր. այդպիսի կարգեր առաջիկայում կպատրաստի Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը:**

**- Որպես հոգեբան՝ ինչքանո՞վ եք կարելի դրո՞ւմ հոգեբանի դերը մասնագիտական կողմնորոշման հարցում և ի՞նչ քայլեր են արվում դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու նպատակով:**

- Դպրոցի հոգեբանը, սոցիալական մանկավարժը եւ դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը մեծ դերակատարություն ունեն մասնագիտական կողմնորոշման հարցում: Սոցիալական մանկավարժները հստակ ընդգծում են, որ աշակերտների դեռահասության տարիքում ամենակարեւոր հարցը մասնագիտական ճիշտ կողմնորոշումն է: Կան անառողջ ուսանողներ, որոնք քարշ են գալիս դիպլոմի



համար, բայց մենք ունենք նաեւ էլիտար ուսանողներ, որոնք գիտեն՝ ինչի համար են եկել և ինչի համար են պայքարում: Բայց այդ խնդիրը խորքային է. առաջատար եվրոպական երկրների կրթական համակարգերում պատշաճ ուշադրություն են դարձնում մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը եւ հետո միայն աշխատաշուկայի պահանջներին:

Կան ուղիներ, որոնցով կարելի է մասնագիտական ընտրությունը կյանքին մոտեցնել, եւ այդ ուղղությամբ ԿԳՍ նախարարությունը հունիսին նախատեսում է դասընթացներ, որտեղ հստակեցված են ծրագրերը, մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանությունը, նպատակը, խնդիրները, սկզբունքները, համակարգին առաջարկվող հետաքրքիր մոդելները, որտեղ ընդգրկված է եւ հանրակրթության ոլորտը, եւ միջին մասնագիտական ու բարձրագույն համակարգը: Այստեղ մենք գործ ունենք ոչ միայն անհատական, այլեւ հասարակական ճիշտ դերաբաշխման հետ: Եթե մենք ունենք տնտեսագետների եւ իրավաբանների գործազուրկների բանակ, մենք չենք կարող ասել, որ ուժեղ արժեքային համակարգ ունեցող հասարակություն ունենք: Ուսանողը պետք է հասարակական եւ ազգային արժեքները հաշվի առնելով ընտրի մասնագիտությունը: Եթե այդ ընտրությունը միայն գրպանի համար է, ապա այստեղ արժեքների կորուստ ենք ունենում: Իսկ արժեքների կորուստը նշանակում է՝ պատերազմ մեր ներսում, հոգեբանական դաշտում: Այստեղ ակնհայտ զոհեր չունենք, բայց ունենք ախտեր, որը ներսից փչացնում է հասարակությունը:

Հարցազրույցը՝ Լիլիա ԲԱՂՅԱՆԻ

### Ստեփանակերտի հրապարակի ձյունն «Տատիկ-պապիկ»-ի հետքերով

Որոշ ժամանակ առաջ շատերի հիացմունքի առարկան էր դարձել Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ձյունից պատրաստված «Մենք ենք մեր սարերը» հուշակոթողը: Գաղափարի հեղինակը եւ իրագործողը Արթուր Պողոսյանն է, ով վերջերս է տեղափոխվել Ստեփանակերտ եւ շատ է սիրում այդպիսի աշխատանքներ: «Մինչ այդ ցանկացել էի հրապարակում ծաղրածուների շարք պատրաստել, բայց ձյունը բավարար չէր, չնայած անընդհատ հետեւում էի՝ տեսնելու կաչուն է, հնարավոր է արդյո՞ք պատրաստել», - ասում է Արթուրը: Իսկ «Տատիկ-պապիկ»-ը վաղուց էր ցանկանում պատրաստել, գալու օրվանից: Այդ օրը առատ ձյուն էր եկել, առանց հապաղելու սկսել է աշխատել: 2 օր տեւած աշխատանքը 2 օրվա կյանք ունեցավ, բայց մեծ հետաքրքրություն առաջացրեց:

Արմատներով արցախցի Արթուր Պողոսյանը ծնվել է մեծացել է Երեւանում, ավարտել Փառոս Թերթեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջը, այնուհետեւ՝ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան: Մասնագիտությամբ խեցեգործ-նկարիչը երկար տարիներ աշխատել

է Երեւանի իր արվեստանոցում, որտեղ շեշտը դրված էր արտադրական համակարգի վրա: Իսկ Արցախ տեղափոխվելու մտադրություն ունեւ շատ վաղուց, դեռ 8-10 տարի առաջ՝ թե ուսումնառության եւ թե աշխատելու ընթացքում, սակայն ամեն անգամ ինչ-որ խնդիր, խցընդոտ էր առաջանում: «Կարելի է ասել՝ Երեւանում արդեն շատ բան էի արել, ինձ պետք էր գործողությունների ավելի լայն շրջանակ, որը գտա, որ պետք է սկսվի Արցախում», - նշում է Արթուրը:

Դիմեց ԼՂԿ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն, ընդառաջեցին, եւ արդեն 4 ամսից ավելի է, ինչ տեղափոխվել է բնակվում է Ստեփանակերտում:

«Այստեղ կան կավագործությամբ զբաղվողներ. ես կփորձեմ իմ ձեռով մատուցել կավագործությունն ու խեցեգործությունը: Տեսնելով, թե ինչպիսի ոգեւորությամբ են երեխաները հաճախում, կարծում եմ՝ տարածում կունենա», - համոզված է գրուցակիցս:

Այժմ Ստեփանակերտի Երիտասարդական պալատի երրորդ հարկում Արթուրը

երկու խմբակ է վարում՝ նկարչական եւ կավագործական: Անվճար հիմունքներով գործող խմբակ են հաճախում 15 աշակերտ: «Ծիշտ է, մի քիչ նեղվածք է, բայց եթե ուզում ես ինչ-որ բան անել, պետք է անել՝ անկախ ամեն ինչից», - ասում է Արթուր Պողոսյանը:

Ստեփանի արդեն մի քանի շաբաթ է, ինչ հաճախում է նկարչական խմբակի պարպումներին: Ասում է, որ շատ նոր բաներ է սովորել, ինչն իր մոտ լավ չէր ստացվում. դրա վրա են աշխատել եւ հազիս առաջընթաց կա:

Արթուրն այստեղի երեխաներից շատ գոհ ու տպավորված է: «Բոլոր մեծ քաղաքների նման Երեւանում եւս շատ էր մարդկանց անտարբերությունը, իսկ այստեղ մարդիկ շատ անմիջական են, ջերմ իրար հանդեպ, միշտ պատրաստակամ օգնելու, ձեռք մեկնելու, որը շատ դրական լիցքեր է տալիս», - նշում է Արթուրը:

Մնալու ժամկետների մասին հստակ չգիտի, բայց ուժերի սահմաններում անում է հնարավորը, որպեսզի հասնի առավելագույն արդյունքի:



վորվածություն կա ծրագիրն ընդլայնելու ուղղությամբ: Խեցեգործ-նկարիչի հիմնական առաքելությունը մասնագետներ պատրաստելն է, այնուհետեւ արվեստը շրջաններում եւս տարածելը:

Տարեկիկ ԱՂԱՅԱՆՅԱՆ

### Դաշնակցական արվեստագետը



Մարտակերտ քաղաքում բնակվող, ծնունդով Գառնաքարից Յուրի Մանգասարյանին Մարտակերտում եւ նրա սահմաններից դուրս շատերն են ճանաչում: Իր մասին հարցին միանգամից պատասխանեց՝ հինչում ըրալ, վար հինչ պատմեմ (ի՞նչ եմ արել, որ ի՞նչ պատմեմ): Իսկ երբ սկսեց իր արածն ու չարածը ներկայացնել, նախատեսված մի քանի ժամը չափազանց քիչ թվաց:

Ծնվել է Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղում 1949թ. հոկտեմբերի 4-ին: Ծնողները 7 զավակ են պահել, մեծացրել: Ավարտել է Գառնաքարի 8-ամյա դպրոցը, հետո ուսումը շարունակել Վանքի դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո 1968թ. ընդունվել է Երեւանի գեղարվեստի տեխնիկումը, 2 տարի սովորել, այնուհետեւ ծառայել խորհրդային բանակում: Ծառայությունից հետո Երեւանում աշխատելու հնարավորություն կար, սակայն ծնողները տարեց էին, խնդրեցին վերադառնալ: Աշխատանքի անցավ Մարտակերտի սովորաբար ֆաբրիկայում, որին կից նկարչական արվեստանոց կար: Նա ամբողջ շրջանի քարոզչության համար նկարներ ու պաստառներ էր պատրաստում: 3 «յավ ծիրքաճյուր» ունեցողների, որոնց թվում նաեւ Յուրիին, այդ գործն է հանձնարարվում: «Այնքան Լենին, Բրեժնե

ենք նկարել, հոգնել ենք»,- նշում է Յուրին:

1976թ. ամուսնացել է, տուն ստացել Մարտակերտում եւ ինչպես ինքն է ասում՝ դարձել մարտակերտցի, չնայած գյուղն ավելի շատ է սիրում: Երկու զավակ ունի՝ որդի ու դուստր, նաեւ՝ 2 թոռ: Այդ կողմով աղքատ եմ՝ ասում է:

Աշխատանքի վայրում կոմունիստական կուսակցական կազմակերպության քարտուղարն էր: Մինչեւ պատերազմն սկսվելը կոմբինատում 200 բանվոր էին աշխատում: Շարժումն սկսվելուց հետո ակտիվորեն մասնակցում է նախապատրաստական աշխատանքներին: «Ստորագրավաքի փուլում այն ժամանակ Շիրիյան Վիգենն էր ղեկավարը,-հիշում է Յուրին,- առաջարկում եմ ստորագրություններ հավաքելու համար տնտեսն ընկնելու փոխարեն ընդհանուր ժողով հայտարարել կոմբինատում»: Հայտարարում է, մոտ 160 բանվորի ներկայությամբ ելույթ է ունենում ինքը՝ կուսկազմակերպության քարտուղարը: Արձանագրում է, որ գործարանի բանվորները համաձայն են Արցախը Հայաստանին միացնել: Արձանագրությունը կազմելուց, վավերացնելուց հետո կոմունիստական կուսկազմակերպության նախկին քարտուղարը զգուշացնում է, որ այդպիսի գործունեության համար կուսակցությունից հեռացնելու են, ինքն էլ հակադրոնում է, թե ավելի լավ է հեռացնեն, որովհետեւ Դարաբաղի այս վիճակի համար կոմունիստներն են մեղավոր: Կուսկազմակերպության նախկին քարտուղարն իսկույն բնորոշում է՝ «ոնց որ դաշնակ լինես»: Այն ժամանակներում դաշնակը, նեմեցը վիրավորական իմաստով էին օգտագործում:

Իսկ Դաշնակցության շարքերն անցնում է 1991թ. սեպտեմբերի վերջերին: Դեռեւս ռուսական բանակն այնտեղ էր: Մարտակերտի շրջանի Պաշտպանական շտաբում մի երեկո, վարագույրներն իջեցրած, որ ռուսները չնկատեն, հավաքվում են: Երեւանից երկու դաշնակցական էին եկել անդամագրման համար: Ներկայից մեկն ասում է, որ ծառայողները չպետք է ինչ-որ կուսակցության անդամ լինեն, եկողները՝ թե միգուցե տղաներն

ուզում են: Իրեն են հարց ուղղում, թե՛ օրինակ դու պարտիական ես, կուզես Դաշնակցական դառնալ, պատասխանում է՝ այո: Ու մտնում է կուսակցության շարքերը: Իրենց հրամանատար Նորայր Դանիելյանը եւս դաշնակցական էր, չնայած գտնում էր, որ զինվորը որեւէ կուսակցության անդամ չպիտի լինի:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակից է, ծավալել է լայն ընդհատակյա գործունեություն, իսկ ռազմական գործողությունների սկսվելուց հետո մասնակցել Մարտակերտի շրջանի համարյա բոլոր գյուղերի ազատագրման համար մղված մարտերին, կռվել Զարվաճառի շրջանում: 1991 հոկտեմբերից մինչեւ 1993թ. հունիսը կապավոր է եղել:

1993թ. Զարվաճառի դիրքերում էր, որտեղ էլ Նորայր Դանիելյանն առաջարկում է շտաբ տեղափոխվել: Հունիսի մեկին նրա հրամանով Մարտակերտի պաշտպանական շտաբ է տեղափոխվում: 1995թ. շտաբի պետ է եղել, 1997-ից՝ գումարտակի հրամանատար:

Յուրիի կրտսեր եղբայրը՝ Սուրեն Մանգասարյանը, բնակվում էր Ռուսաստանի Սամարա քաղաքում (Նախկինում՝ Կոյբիշել): Շարժման ծավալումից հետո՝ 1988թ. վերադառնում է Արցախ եւ նվիրվում հայրենիքի ազատագրության գործին: Եղբայրը եւս դաշնակցական էր, Առանձնակի գումարտակի կազմում էր կռվում. զոհվել է 1994թ. հունվարի 6-ին: Եղբորը նվիրված հուշաքարն ու նկարն իր ձեռքով է պատրաստել:

Բանակից զորացրվելուց հետո Մարտակերտում կուսակցական մարմին են ստեղծում, որի ակունքներում կանգնած է Յուրի Մանգասարյանը:

Չորացրվել է 1998թ.: Ծառայությունից դուրս գալու պատճառներից մեկն էլ տանը տարբեր աշխատանքներ կատարելն է: Նկարչական ծիրը ունի, չի կարողանում մերժել գոհվածներին նվիրված հուշաքարերի, քանդակների, նկարների պատրաստման խնդրանքները: Եվ, ինչպես ծանոթներն են փաստում, այդ աշխատանքները կատարում է անվճար, հաճախ սեփական միջոցներով օգնում տեղափոխման եւ տեղադրման հարցե-

րում: Նրա ձեռքի աշխատանքներն են Գառնաքարի հուշադրյուրը, Կիչանի, Մաղավուզի, Ներքին Հոռաթաղի հուշարձանների նկարները, Մարտակերտ քաղաքի եւ այլ վայրերի մի շարք հուշարձաններ:

Ուրիշ տեղ ապրելու մասին չի էլ մտածում: Չավակները եւս նույն ոգով են դաստիարակվել: Արցախյան պատերազմի ժամանակ, երբ որդուն ու դստերը Երեւան՝ ավելի ապահով տեղ տեղափոխելու հնարավորություն կար, հենց իրենք են հրաժարվում մեկնելուց: Այժմ որդին՝ Միտրը, Մարտակերտի արհմիության ղեկավարն է: 2016 թ. ապրիլին եւ դրանից հետո անընդհատ անցնում է դիրքից դիրք, ով ինչի պակասություն ունի, հասցնում: Դրսից ինչ-որ օգնություն, գումար ուղարկելիս նրան են դիմում, վստահում, որ տեղ հասցնի:

Հայրենի գյուղին՝ Գառնաքարին, «Չարդախու» են ասում: Գյուղի բնակիչների մեծամասնությունը ծառայում է բանակում: Փոքր գյուղ է, բայց ծնունդով գառնաքարցի 74 հոգի մասնակցել են Արցախյան պատերազմին:

Դարաբաղի խնդրի լուծման մասին խոսելիս էլ մեջբերում է 1995 թ. Երեւանում կայացած ինչ-որ կողմ տեղանի ժամանակ ինչ-որ կողմ տեղանի անկախության գնացքն անցել է. ով հասցրել է՝ նստել է, ով չի հասցրել՝ Ադրբեջանի նման մնացել է կանգառում: Իսկ Արցախի հարցով մտահոգություն չունի, հավատում է ժողովրդի նվիրվածությանը: Եվ որպես ապացույց՝ բերում հետեւյալ դեպքը: Ընկերոջ որդին Մարտակերտում պարտադիր ծառայության պիտի անցներ, Յուրին ցանկանում է իր հեռախոսահամարը տալ նրան, որ ինչ-որ բանով օգնելու համար գանգի: Բայց նորակոչիկը չի վերցրում՝ ասելով՝ «օգնելու բան չկա, 2 տարի է էլի, կծառայեմ»: «Զանի այդպիսի տղաներն են սահմանը հսկում, հանգիստ քնում ենք»,- նշում է նա:

Իսկ մենք համոզված ենք, քանի դեռ կան Յուրիի նման իր հող ու ջրին կպած, ազնիվ, նվիրված, կարեկից, բանիմաց ու համեստ մարդիկ, Արցախի ապագան չի կարող մշուշուտ լինել:

Տաթևիկ ԱՐԱՋՆՆՅԱՆ

### Կենտրոնը փորձում է մշակույթի միջոցով լրացնել երեխայի դաստիարակությունը



Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն Պետական ոչ առետրային կազմակերպությունն ստեղծվել է 2006 թվականին: Այստեղ գործում են շուրջ 11 ՊՈԱԿ-ներ, որոնք աշխատում են կողք-կողքի, միեւնույն

տարածքում: Կենտրոնում գործում են «Մռակած», «Արցախ», «Ջագ», «Արցախ Եստրադային» պետական համույթները, «Մենք ենք մեր սարերը» պարի պետական-ազգագրական համույթը, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը, Արցախի պետական կամերային նվագախումբը, Պարի պետական համույթը, Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի Արցախի մասնաճյուղը, Գյուրջյանի անվան արվեստի դպրոցը եւ Ստեփանակերտի պարարվեստի քոլեջը: Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնին կից գործում է նաեւ «Արցախի բալիկներ» պետական մանկապատանեկան համույթը, որը ստեղծվել էր Սերգեյ Հարությունյանի նախաձեռնությամբ:

Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի մասին զրուցեցինք տնօրեն Արմեն Հովսեփյանի հետ: Նրա խոսքով՝ այստեղ հաճախում է 164 աշակերտ: Արարիյան պատերազմից հետո կենտրոնի եւ ԼՂՀ ՄԵՆ նախաձեռնությամբ տեղի

ունեցավ միջոցառում, որի նպատակն էր՝ երեխաներին հանել սթրեսից՝ հոգեկան ճնշվածությունից: Միջոցառման ընթացքում Լուսինե Հալուսյանը փորձեց նկարչության, կավագործության միջոցով երեխաներին հանել հոգեկան ճնշվածությունից: Մշակույթի կենտրոնը նախատեսված է 5-17 տարեկան երեխաների համար: Արմեն Հովսեփյանը նշեց, որ միջոցառումները լինում են տարաբնույթի՝ հանդիպումներ ժամանակակից բանաստեղծների հետ, հաշվետու համերգներ, տոներին նվիրված միջոցառումներ, այցեր ԱՀ ՊԲ զորամասեր: Ապա ընդգծեց, որ միջոցառումների ընթացքում ներկայացնում են բազմաժանր երգեր, ազգային պարեր: Կենտրոն հաճախող երեխաները վճարում են ամսական 1000 դրամ: Կենտրոնը համարված է մասնագետներով, սակայն, ըստ տնօրենի, տեխնիկական հագեցվածության առումով այդքան էլ բավարարված չեն: «Կենտրոնը փորձում է մշակույթի միջոցով լրացնել երեխայի դաստիարակությունը, ներկայացնել մշակույթի ճյուղերը, զարգացնել մշակույթը եւ տարածել

այն Արցախում»,- նշեց Արմեն Հովսեփյանը:

Կենտրոնի տնօրենի խոսքով՝ «Արցախի բալիկներ» պետական համույթի սաներից են շուրջընկերային հայտնի մի շարք ներկայացուցիչներ՝ Անդրեյ, Ռազմիկ Ամյանը, Վարդան Բաղայանը եւ ուրիշներ:

Սոնյա Սարուխանյանն «Արցախի բալիկներ»-ի սաներից մեկն է: 26-ամյա Սոնյան այսօր կենտրոնում դասավանդում է պարի ուսուցում: Իր խոսքով՝ 7 տարեկանից հաճախել է մանկապատանեկան համույթ եւ ժամանակի ընթացքում սովորել նաեւ պարի ուսուցում: Այսօր երիտասարդ պարուսույցն իր փորձով կիսվում է երեխաների հետ: «Որպես մասնագիտություն՝ նախընտրեցի պարը, քանի որ այն միշտ առաջնահերթ է եղել ինձ համար: Այսօր ես «կանգնած եմ» այնտեղ, որտեղից սկսել եմ իմ կողմնորոշումը»,- հավելեց Սոնյան եւ, եզրափակելով իր խոսքը, նշեց, որ ամեն օր կենտրոն է գալիս Անկերանի շրջանի Այգեստան գյուղից:

ԱՍԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

### Փորրիկ գրախանութն ու գրավաճառի «մեծ» նպատակը



Ստեփանակերտի միակ գրախանութի տեր Սամվել Պետրոսյանը մի նպատակը ունի: Ուզում է խանութը եղածից մեծացնել՝ որոշ տարածք հատկացնելով ընթերցասարահին:

«Կան գիրք գնող մարդիկ, որոնց միայն այդ գրքի երկու թերթն է անհրաժեշտ կարդալ: Սակայն ստիպված գիրքը գնում են: Իսկ եթե ընթերցասարահ լիներ, գուժար կխնայեին», - բացատրում է Սամվել Պետրոսյանը:

Գողտրիկ գրախանութը 1995-ին է բացել: Սկզբում վաճառում էր միայն թերթեր: Այնուհետև՝ խանութի մեծացման հետ մեկտեղ, ընդլայնեց նաև «ապրանքի» տեսականի: Թերթերի կողքին կամաց-կամաց սկսվեցին տեղ գրադեցնել

նաև գրքեր:

«Խորհրդային Միության տարիներին ժողովուրդն ու գիրքը հակադիր էին: Այդ պատճառով սկզբում գրքերի տեսականին սահմանափակվում էր բժշկության եւ հորոսկոպների ոլորտով», - ասում է Սամվել Պետրոսյանը:

Գրքերի տեսականին ընդլայնվել է խմբագիրների եւ գրողների հետ ծանոթանալուց հետո, նաև՝ ներկայիս հիմնական գործընկերոջ՝ Երեւանի «Բուկինիստ» գրախանութի տնօրեն Խաչիկ Վարդանյանի հետ հանդիպումից հետո:

Մոսկվայում կրթություն ստացած գրավաճառն իր սեփական գրադարանը եւս ունի: Գրադարանի առաջին գրքերը Խորհրդային Միության տարիներին

Մոսկվայից դժվարությամբ ձեռք բերված՝ Ա. Իսահակյանի, Ս. Կապուտիկյանի ու Բաֆֆու հատորներն էին:

«Մոսկվայում սովորելու տարիներին ձեռք բերեցի դրանք: Յետ գալուց ճամբարուկս տեղից շարժել չէր լինում: Բերեցի եւ ինամբով դասավորեցի պահարանում: Գրքերս մեծ հարստություն են, - ասում է Սամվելը եւ շարունակում, - հիմա, ոչ միշտ եմ ժամանակ ունենում ընթերցանության համար»:

Գրախանութ բացելու մտահղացումը սեփական բիզնես ունենալու նպատակ էր հետապնդում: Սակայն, մասնագիտությամբ ինժեներ Սամվելը նշում է, որ գիրք վաճառելը ոչ միայն բիզնես է, այլ՝ հաճելի բիզնես: «Ուրախ եմ, որ այս բնագավառում եմ աշխատում: Յաճույք եմ ստանում իմ գործից», - անկեղծանում է գրուցակիցս:

Գրավաճառն իր հաճախորդների պահանջարկն ու նախասիրությունները գիտի: Պատվերներ եւս ընդունում է: «Ինչ գիրք կարդալ» հարցը երբեք անպատասխան չի թողնում: Խորհուրդներ եւս տալիս է: Սիրով է ընդունում նաև ընթերցված գիրքը քննարկելու առաջարկը:

Ընթերցանություն սիրող հաճախորդներին գիտի անուն առ անուն: Նրանց «Կիրքերի բալետիկներ» թիմ է անվանում: Ցավով է նշում, սակայն, որ թիմի անդամների թիվը կարող է թվարկել երկու ձեռքերի մատներին վրա:

«Ընթերցողների թիվը նվազել է նաև համացանցի տարածումից հետո, - ուսանողներ են եղել, որ դեռ մի գիրքը չի սաց-

րած՝ նորն էին պատվիրում: Յիմա շատերը էլեկտրոնային են կարդում», - ասում է նա ու պահարանից հանում հաճախորդի ուզած՝ Դժոճո Մոյսիսի երեք գիրք: 17-ամյա Արամն ընտրում է «Քեզանից հետո» գործը: «Այս մեկի կազմը սիրում է: Կարծում եմ՝ կհավանի», - բացատրում է երիտասարդը եւ գիրքը թելի տակ տեղավորելով՝ շտապում ընկերուհու միամսյակը շնորհավորելու:

«Գրախանութի պահարաններում բնակվող բոլոր գրքերն էլ սպասում են իրենց տերերին», - եզրափակում է Սամվել Պետրոսյանը:

**Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ**



### Դուշման Վարդանը կդառնար 51 տարեկան



Մարտի 9-ին Արցախյան ազատամարտի հերոս, ՀՀԳ գաղափարակիր, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր Վարդան Ստեփանյանի ծննդյան օրն է: Դուշման Վարդանը կդառնար 51 տարեկան:

Վարդան Ստեփանյանի ջոկատն էր, որ առաջիններից մեկը մտավ Շուշի:

Նա մարտի նախաձեռնողն էր: Նրա ջոկատը կռվեց ամենադժվարին ու պատասխանատու ուղղություններում, ժամանակին կատարեց մարտական հանձնարարությունը եւ նպաստեց Շուշիի ազատագրման հաղթանակին:

Դուշմանը Արցախի ազատագրական պայքարի ամենադժվարին ժամանակներից մինչեւ մահը՝ 1992 թվականը, նրա քաջարի գինվորն էր: Աֆղանստանում մարտնչած օրերի մեծ փորձն ու հմտությունը շատ օգնեցին դժվարին ու պա-

տասխանատու գործողությունների հաջող իրականացմանը՝ Լեւոնոյի, Կրկժանի, Մալիբեյլիի, Խոջալուի, Չառխալուի, Բերդաձորի, Լաչինի եւ այլ բնակավայրերի ազատագրմանը:

**Կռիվ-կռիվ էին խաղում ու «ազատագրում» գրքերը**

Թանգարանում կա նաև գրադարան, որից օգտվել է Դուշմանը: Յերոսի քույրը՝ տիկին Արմինեն պատմում է, որ փոքր ժամանակ գրադարանի գրադարակների մեջտեղում կռիվ-կռիվ էին խաղում եղբոր հետ ու «ազատագրում» էին գրքերը:

Վարդանը քրոջն ասում էր, որ հայը իրավունք չունի թուլանալու, քանի դեռ հարեւանությամբ կա թուրքը: Յայն պիտի գինվորներ պատրաստի, քանի որ թուրքը չի կորցնելու ախորժակը Յայաստանի նկատմամբ:

Սա էր պատճառը, որ Դուշմանը որոշել էր գնալ Աֆղանստանում ծառայելու:

Տանն ասում էր, թե իբր գնում է ընդունելության համար մաթեմատիկա ու ֆիզիկա պարապելու, բայց իրականում գնում էր պարաշյուտով թռչելու: Զննության օրն էլ գնացել էր պատերազմի մասին ֆիլմ դիտելու ու կտրվել էր պոլիտեխնիկի ընդունելության քննությունից:

Յետո դիմել էր գինկոմիսարիատ, որ իրեն ուղարկեն Աֆղանստան, որտեղ պատերազմ էր: Գիտեր, որ Յայաստանում գինվորի կարիք միշտ էլ լինելու է: Պայմանավորվածություն ուներ մոր հետ. «Ուր էլ գնամ, տուն եմ գալու: Դու չես լացելու, ես էլ չեմ ծխելու»: Յենց Աֆղանստանից էլ բերեց «Դուշման» մականունը:

**Գրում եմ «Հունգարիայից»**

«Քանի որ ձեռագիրս լավն է, ինձ Հունգարիա են տանում»: Իսկ իրականում Դուշմանն արդեն մասնակցում էր աֆղանական պատերազմին: Մի քանի նամակ էր միանգամից գրում, թողնում գորամա-

սում, որ քանի դեռ ինքը մարտերի մեջ էր լինում, գորամասում մնացող ընկերներն ուղարկեին իր ընտանիքին, բացակայությունը չզգացվեր:

Ինչո՞ւ Հունգարիա, որովհետև գորամասում գիրք էր գտել Հունգարիայի տեսարժան վայրերի մասին, ու որպեսզի մայրը հետախույզին բնորոշ կասկածատուությամբ գլխի չընկներ իր գտնվելու վայրի մասին, գրում էր հենց այդ երկրի մասին:

«Գրում եմ ձեզ Հունգարիայից: Բա, այնպիսի հետաքրքիր բան է բանակը, ամբողջ աշխարհն են պատվում: Այստեղ շատ լավ է: Այստեղ շոգ չէ, ամենաշատը 30 աստիճան, ամբողջ շրջապատը անտառներ են, գորամասը գտնվում է տուրբազանների մոտ, մեզ մոտ առողջարան էլ կա: Այստեղ առաջին օրը տեղացիները մեզ ձմերուկի մուրաբա հյուրասիրեցին. առաջին անգամ էի ուտում, շատ դուրս եկավ: Ատում են՝ հունգարացիները խաղողի լավ գինի են սարքում, հնարավորության դեպքում դա էլ կփորձեմ ու կգրեմ: Առայժմ ինձ ոչ մի տեղ չեն նշանակել, բայց խոստացել են, որ շտաբում «պիսր» (գրագիր) են նշանակելու: Կերակրում են շատ լավ: Ինչ եկել ենք, առայժմ ոչինչ չենք արել: Չորամասում նույնիսկ լավ լողավազան կա, բաղնիքը՝ ֆիննական...», - ու սա գրում էր Աֆղանստանից, որտեղ խորհրդային զորքերը պատերազմ էին վարում:

Դուշմանը միշտ առանձին նամակներ էր ուղարկում մորը, քրոջը, եղբորը: Յուրաքանչյուրին պատմում էր առանձին պատմություն, իսկ եղբորը պատմում էր մի քիչ ավելին ու պատրաստում էր գինվորական ծառայությանը:

«Բարեւ, Տիկո՞ քան, ես էլ մեր համագետտը: Տիկո՞ քան, վաղը մեզ, այսինքն՝ մի քանի հայերի, ուղարկում են Հունգա-

րիա, դրա համար շատ ուրախ եմ. գոնե արտասահմանյան երկիր կտեսնեմ: Ապե՛ր, դու մամային լսիր, լավ սովորիր. նույնիսկ բանակում է դա պետք գալիս: Թեևսիսի պարապմունքները բաց մի՛ թող, առավոտներն էլ տղաների հետ վազիր: Մեզ մոտ տղաներ կան, որ տանը միայն հաց են կերել ու զուգարան գնացել: Յիմա էլ վազել չեն կարողանում, մի քիչ վազում են ու ընկնում, լալիս: Դրա համար սպորտով շատ զբաղվիր...»:

**Աֆղանստանից՝ Արցախ**

Աֆղանստանում ծառայությանից հետո Վարդանը վերադարձել էր Երեւան ու ընդունվել Երեւանի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետ: Սակայն Դուշմանը վաղուց էր կանխագուշակում հայության ապագան:

1988-ին՝ Արցախյան շարժման սկզբներից, Վարդանն արդեն առաջին շարքերում էր, բայց չէր բավարարվում ցույցերին մասնակցելով: Ընկերոջ՝ Արմեն Երիցյանի հետ ստեղծել էր «Ասպետ» խումբը, որտեղ մարտիկներ էր պատրաստում, իսկ հետագայում նման խումբ ստեղծեց նաև Արցախում:

Աֆղանստանում կռված տղաներից հենց նա էր, որ մարզում էր «Ազգային լեգեոն» ջոկատին, որի կազմում էին նաև Մկրտիչ Տոնոյանն ու Դավիթ Ամալյանը: Նա էր, որ բանակի ստեղծման հիմքերից մեկը եղավ, մասնակցեց Արցախյան պատերազմի գրեթե բոլոր թեժ կետերի մարտերին՝ Երասխավանում, Տավուշում, Ստեփանակերտը կրակի տակ պահող Կրկժանում, Շուշիում ու այլ տեղերում:

Շուշիի ազատագրումից հետո էր, որ գինի էր կաթեցնում Շուշիի հայկական գերեզմանատան շիրմաքարերին ու ասում. «Մեր պապե՛ր, Շուշին ազատագրված է, հանգստացե՛ք...»:

**Պատրաստեց Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆԸ**

# Ադրբեջանի որդեգրած «գորտի Էֆեկտ» ռազմավարությունը եւ մեր հակադրած «առաջադրանք եւ ընկեր» սկզբունքը

/սկիզբը՝ նախորդ համարում/

Այսպիսով, 2014-ի ամռան վերջերից, սահմանային միջադեպերի ժամանակ հակառակորդն սկսեց օգտագործել ականանետեր՝ սկզբնական շրջանում 60 մմ տրամաչափի, ապա՝ 82 մմ, ավելի ուշ գործի դրվեց 120 մմ տրամաչափի ականանետ:

1994թ. զինադադարից հետո, հատկապես առաջին ամիսներին, առաջնագծում թեւեւ լինում էին թե՛ բախումներ, միջդիրքային միկրոմարտեր, սակայն հրետանի (հրանոթներ կամ ականանետեր) գրեթե չէին օգտագործվում:

Սա բավականին լուրջ առաջխաղացում էր հակառակորդի կողմից օգտագործվող զինատեսակների եւ մարտավարության առումով: Առավել եւս, այս ընթացքում ինտենսիվացան հետախուզողի վերսիսի գործողություններն առաջնագծում:

Հակառակորդն այնքան լկտիացավ, որ դիվերսիոն գործողություններ սկսեց կազմակերպել նույնիսկ հայկական ուժերի թիկունքում:

2015թ. սկսած՝ հակառակորդը, օգտագործելով անօդաչու թռչող սարքեր, օրը ցերեկով ականանետային կրակ բացեց ՊԲ բարձրաստիճան սպաներից մեկի մեքենայի ուղղությամբ եւ նույնիսկ մամուլով տարածեց ԼՂՀ ՊԲ զննապետի մահվան մասին կեղծ լուրեր:

Այս դեպքից բխող կարեւոր եզրակացությունն այն էր, որ հակառակորդն իր ականանետային կրակի կառավարման համար օգտագործում է անօդաչու սարքեր. սա արդեն գիշերային լարվածություն է չէր, այլ կոնկրետ ծրագրված բացահայտ գործողություն:

Անօդաչու սարքերի օգտագործումը շփման գծում հակառակորդի կողմից նոր քայլ էր թե՛ մարտավարական, թե՛ ռազմատեխնիկական տեսակետից:

2015թ. աշնան կեսերին հակառակորդը զինադադարից հետո առաջին անգամ գործի դրեց հաուբիցներ եւ կրակի թիրախ դարձրեց արդեն ոչ թե՛ առաջնագիծը, այլ՝ ստորաբաժանման զորանոցը, որը գտնվում էր թիկունքում՝ առաջնագծից 5-6 կմ հեռու:

Նույն թվի ուշ աշնան օգտագործեց S-72 տանկ՝ բաց կրակային դիրքից կրակ բացելով ոչ թե՛ դիրքամերձ ճանապարհի, այլ միջհամայնքային նշանակության ճանապարհով ընթացող մեքենաների վրա:

Այսպիսով, 2014թ. օգոստոսի վերջին ավարտված միկրոպատերազմին հաջորդեց ականանետային պատերազմը: Սրա գագաթնակետը թիկունքում գտնվող զորամասի ռմբակոծումն էր հաուբիցներից, որին կարճ ժամանակ հետո հաջորդեց տանկի կրակը:

2016թ. հունվարն ու փետրվարը աչքի չընկան արտառոց միջադեպերով, այս ժամանակահատվածը կարծես դադարի պահն էր նախորդ փուլի ավարտից հետո եւ նոր փուլի նախօրեին, այսպես կոչված, միջազգային հանրության արձագանքները լսելու եւ միգուցե հայկական կողմին հանգստացնելու համար:



Գարնան սկզբին սկսվեցին եւ օրեցօր ինտենսիվացան միջադեպերը սահմանագծի եւ նրան հարակից թիկունքային հատվածում:

### Կարճ տարեգրություն մինչ ապրիլյան քառօրյան. ինչ էին գրուցում պարզ արցախցիներն իրար հետ:

Մարտի 24-25 գիշեր

- Մարտունու շրջանի Յերիեր գյուղից. «Կարծես ականանետից կրակում էին Մարտունու ուղղությամբ, լուսադեմին ձայները լսվում էին գյուղում»:

Մարտի 28-29

- Ականանետով կրակել են Մարտակերտի ու Թալիշի ուղղությամբ:

Եւ, վերջապես՝ ապրիլի 2-ի առավոտյան, գրուց Ստեփանակերտում.

Գիշերը կրակել են Թալիշի ուղղությամբ (գրուցում են հանգիստ, կարծես խոսքը սովորական նյութի է վերաբերում):

Այս ամենից հանգում ենք երկու եզրակացության.

1. Ադրբեջանն իր գործողություններով հստակ, ծրագրված կերպով գնում էր դեպի ապրիլյան իրադարձությունները:

2. Արցախի բնակիչը սպասում էր այդ իրադարձություններին:

Որ պիտի լինե՞ր պատերազմական բռնկում, կարելի էր ենթադրել: Ինչպիսիք այն էր, թե՛ երբ կարող էր սկսվել:

### Առաջադրանք եւ ընկեր Առաջադրանքը

«Կանգնում ենք մինչեւ վերջ, մինչեւ վերջին փամփուշտը, հետո անցնում ենք մերձամարտի» (Մերուժան Ստեփանյան)

ձակման ժամանակ, դիրքի շրջանաձեւ պաշտպանությունը դիվերսիոն հարձակման ժամանակ, ականահարման ժամանակ գրագետ եւ արդյունավետ կերպով օգտվել թաքստոցներից եւ կազմակերպված կերպով անցնել պաշտպանության: Այս եւ նման շատ զինվորական գիտելիքների եւ հմտությունների էին տիրապետել հայ զինվորները, որոնք ներկա դիրքային ծառայության անբաժան մասն են դարձել:

Մեր զինվորները, իրենց հասանելիք առաջադրանքը գիտակցելով, կարողացան այն կատարել, եւ դրա ապացույց կարող ենք համարել ապրիլյան քառօրյան, երբ դիրքերի ավազները՝ ընդամենը քսանամյա սերժանտներ, կարողանում էին իրենց ջոկերով այնպես կազմակերպել դիրքերի պաշտպանությունը, որ թե՛ քանակական, թե՛ ռազմական առավելություն ունեցող հակառակորդը մի քանի գրոհներից հետո կարողացել էր տիրել ընդամենը մի քանի դիրքի...

Օրինակը՝ «Լալայկան» (Լեյլեթեփե) պաշտպանող «Յրեշտակների ջոկատը» եւ դիրքի ավագ Ադամ Սահակյանը:

### Ընկեր

«Պապ, մեզ մոտ ախպերություն է»- քառօրյայի ժամանակ նահատակված հերոսներից մեկը այսպիսի խոսքեր էր ասել հորը:

Մեր զինվորների մոտ փոխվեց եւ արմատացավ մեկ այլ հասկացություն եւս՝ ընկեր, գեղքի ընկեր, ում ամենակրիտիկական պահին պիտի վստահես անգամ կյանքը:

Ապրիլյան քսանության ժամանակ մեր զինվորները ցույց տվեցին ընկերասիրության եւ նվիրումի բացառիկ օրինակներ:

Հիշենք կապիտան Ուրֆանյանին մեռնակ չթողած, հրամանն անգամ անտեսած Զյարամ Սյույանին:

Լինելով վիրավոր, սակայն վիրավոր ընկերոջը մինչեւ վերջ հնարավորինս ապահով դիրք տեղափոխող Ռոբերտ Աբաջյանին հիշենք եւ բազում այլ դեպքեր ու հերոսներ:

Այսպիսով՝ հակառակորդի կողմից մեզ պարտադրված «Գորտի Էֆեկտ» ռազմավարությանը մենք պատասխանեցինք մեր մեջ արմատացած զինվորական վարքականոնի կարեւորագույն սկզբունքով՝ առաջադրանք եւ ընկեր:

Մեր ՍԿԵՏՍՅԱԼ

## «Հայրերի մեղքը»



ԱՄՆ-ի Մանհեթենի քուլեջի փիլիսոփայության պրոֆեսոր Շվին Մարշալը պատրաստվում է գիրք հրատարակել Հայոց ցեղասպանության մասին, որը կկոչվի «Հայրերի մեղքը»: Այդ մասին նա ասաց մարտի 13-ին ԱրՊՀ-ում կազմակերպված հանդիպման ժամանակ: Ուսանողադասախոսական կազմի հետ հանդիպման ընթացքում իր ելույթում Շ. Մարշալը մասնավորապես ասաց. «Մենք չենք կարող ուժեղ լինել առանց ճշմարտության, մենք պետք է միանանք եւ ապրենք ճշմարտության համար»: Իհարկե, ճշմարտություն ասելով նա նկատի ունի Հայոց մեծ եղեռնը եւ նրա մա-

սին բարձրաձայնելու պատրաստակամությունը: Փիլիսոփայության դասախոսը նշեց, որ 1915թ. ցեղասպանությունը դեռ չի ավարտվել, քանի որ ցեղասպանության մի բաղադրիչն էլ հենց ցեղասպանությունը ժխտելն է, եւ քանի դեռ Թուրքիան ժխտում է այն, ցեղասպանությունը դեռ շարունակվում է: Ցեղասպանության մի բաղադրիչն էլ նրա ազդեցությունն է ամբողջ արեւմտյան աշխարհի քաղաքակրթության վրա: Չէ՞ որ Հիտլերը, սկսելով եվրոպական երկրների ֆաշիստական օկուպացիան, օրինակ էր բերում՝ ո՞վ է արդյոք հիշում 20-րդ դարասկզբի հայերի ցեղասպանությունը:

Այսօր էլ ցեղասպանությունը շարունակվում է. ճշմարտությունը կոծկելով՝ թուրքերը փորձում են երկրի երեսից ջն-

ջել Հայաստանը: Ինչո՞ւ է պրոֆեսորը գիրքն անվանակոչում «Հայրերի մեղքը», քանի որ, ըստ ասվածաշնչյան պատվիրանի, ծնողների՝ թուրքերի մեղքը փոխանցվում է որդիներին:

Ցեղասպանությունից հետո թուրքերը հայ երեխաներին ստիպում էին աղոթել որպես մահմեդականներ, խոսել թուրքերեն, տարածքների, տեղանունների անունները հայերենից փոխում էին թուրքերենի, մի խոսքով՝ ջնջում էին ամեն հայկականը:

Շ. Մարշալը նպատակադրվել է հաջորդ տարի ԱՄՆ-ից 50 ուսանող բերել Հայաստան՝ Հայաստանին ու հայկական մշակույթին մոտիկից ծանոթանալու համար:

«Ապառաժ»

### Սպորտը եվ հոգեբանությունը



Մեր ամբողջ կյանքը շարժում է: Եթե խոսենք սպորտի մասին, ապա դա ակտիվ շարժում է, ուրեմն՝ նաեւ առողջ ապրելակերպ: Այսօր ոչ բոլոր մարդիկ են հասկանում, որ ֆիզիկական մարզումներն օգտակար ու արդիական են հենց իրենց համար: Երբեմն, երբ ինչ-որ մեկի ձեռքն է ընկնում սպորտի մասին նյութեր, նա պարզապես հաշվի է առնում, բայց չի ձգտում փոխել եւ վերակառուցել իր կյանքը՝ բարձրացնելով ակտիվության մակարդակը: Դրա համար էլ արժե ուշադրություն դարձնել սպորտի ոչ միայն ֆիզիկական, այլ նաեւ հոգեբանական առողջության անմիջական կապի վրա: Պարզվում է, որ մարդու տրամադրությունն ուղղակի կապված է այս կամ այն հորմոնների արտադրման հետ, որոնք քանակությունը բարձրացնում են ֆիզիկական մարզումները: Էնդորֆինը, որն այլ կերպ անվանում են երջանկության հորմոն, համարվում է բնական հակադեպրեսան: Ֆիզիկական վարժությունները սնուցում են մարմնի օրգանները, այդ թվում՝ գլխուղեղը թթվածնով: Դա նպաստում է բազմաթիվ հոգեկան անհանգստությունների նվազման, ինչպիսիք են՝ դեպրեսիան, սթրեսները, ճնշվածությունը, անքնությունը:

Սպորտի եւ մարդու հոգեկան առողջության կապին վերաբերող հարցեր քննարկեցինք հոգեբան, հոգեթերապեւտ, ՀՀԹ «Էմպատիա» հոգեբանական կարգավորման կենտրոնի տնօրեն Անահիտ Լալայանի հետ:

#### - Տիկին Լալայան, ինչպե՞ս է ազդում սպորտը մարդու հոգեկան առողջության վրա:

- Ինչպես հայտնի է՝ առողջությունը ֆիզիկական, հոգեկան եւ սոցիալական բարեկեցիկ վիճակն է, եւ ոչ թե պարզապես հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայությունը: Պետք է նշել, որ առողջության այս բաղադրանքի մասերը փոխկապակցված են, իսկ բաղադրանքները որեւէ մեկի խախտվածությունն առաջ է բերում մյուսի խախտում: Ֆիզիկական առողջության լուրջ խնդիրները կարող են առաջացնել հոգեկան եւ Էմո-

ցիոնալ վիճակի խանգարումներ, շրջապատող մարդկանց հետ հարաբերությունների եւ արժեհամակարգի փոփոխություններ: Այս դեպքում խոսքը սոմատիկայի (մարմնի) եւ հոգեկանի կապի մասին է: Սպորտով պարբերաբար զբաղվելը մեծ ազդեցություն ունի սոմատոփսիխիկ ու փսիխոսոմատիկ հիվանդությունների զարգացման կանխման, պրոֆիլակտիկայի վրա: Սպորտի ազդեցությունն ընդգրկում է ոչ միայն ֆիզիկական եւ հոգեկան առողջությունը, այլ նաեւ հանդիսանում է այն գործոններից մեկը, որը ձեւավորում է հստակեցված բնավորությունը եւ նպաստում լիարժեք անձի կայացմանը: Ինքնավստահություն, հուզական կայունություն, նպատակասլացություն. սրանք այն հատկանիշներն են, որոնք երազում է իր մեջ ձեւավորել յուրաքանչյուր մարդ, եւ որոնք ձեւավորմանն օգնում է սպորտը:

#### - Իսկ ի՞նչ դեր ունի սպորտը անձի ձեւավորման գործընթացում:

- Նույնիսկ սիրողական բնույթի պարավունքներն ազդում են մեր վիճակի, բնավորության եւ անձի վրա: Անձի ձեւավորումը բարդ գործընթաց է, որի վրա իրենց ուրույն ազդեցությունն ունեն ծնողները, դաստիարակությունը: Հաճախ պատահում է այնպես, որ ծնողները նախադրոցական հասակի երեխային, որի անձը դեռեւս լրիվությամբ չի ձեւավորվել եւ որին ընտրության հնարավորություն չի տրվել, փորձում են որեւէ մարզական խմբակ ներգրավել՝ մոռանալով հաշվի առնել երեխայի կարծիքը: Այդպիսով, նրանք բավարարում են իրենց մանկության չբավարարված ցանկությունները՝ զանազան այլ պարզաբանումներով: Մեզ՝ հոգեբաններին համար նման մոտեցումը թերեւս անընդունելի է: Առաջին տեղում նախեւառաջ երեխայի հետաքրքրությունն է, այնուհետեւ լիարժեք զբաղվածությունը: Պետք է հաշվի առնել երեխայի անձի կառուցվածքը, արդյո՞ք անձնային հատկությունները համապատասխանում են մարզածեփն՝ խուսափելու համար այն անցանկալի հետեւանքներից, ինչին կարող է հասցնել սխալ մոտեցումը: Պետք է հիշել, որ ցանկացած պարտադրանք առաջացնում է հակադրվածություն, ուստի կարեւոր է, որ նախքան պարավունքի տալը հաշվի նստել երեխայի ցանկությունների, պահանջ-մոլեքների, հետաքրքրությունների հետ եւ թույլ տալ ինքը որոշում կայացնել: Ֆիզիկոսներն եւ սպորտը անձի ձեւավորման վրա մեծ ազդեցություն ունեն: Իրարից առանձնացվում են այն ֆիզիկական մարզումները, որոնք միտված են հաճույքի եւ մարզական կեցվածքի պահպանմանը, եւ այն պրոֆեսիոնալ պարավունքները, որոնք նախապատրաստում են մարզիկին առաջնություններում հանդես գալու համար: Բոլոր դեպքերում էլ զարգանում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական հատկանիշները, անձի կառուց-

վածքը, ինքնահաստատումը, կոլեկտիվ մտածելակերպը, կարգավորվում են միջանձնային հարաբերությունները թե՛ տանը, թե՛ դրսում:

#### - Հոգեբանական պրակտիկայում սպորտը որպես թերապիայի միջոց կիրառվո՞ւմ է:

- Ինչպես բոլոր դեպքերում նշում են, այնպես էլ հիմա շեշտեմ, որ հոգեբանական թերապիայի ցանկացած միջոց անհատական մոտեցում է պահանջում. անձի անհատական առանձնահատկություններից է կախված, թե մոտեցումը ինչպիսին կլինի: Այո, լինում են դեպքեր, երբ մենք անհրաժեշտ ենք համարում եւ ինքներս ենք այցելությունն ուղղորդում ֆիզիկական ակտիվության:

#### - Ձեր գլխավորած հոգեբանական կարգավորման կենտրոնում նմանատիպ մարզական խմբակներ կա՞ն:

- Առաջին չկան, բայց ունենալու հեռանկարներ կան: Ուզում ենք կենտրոնի տարածքը ընդլայնել եւ կենտրոնը համալրել համապատասխան որակյալ մասնագետներով: Աշխատանքներն ընթացքի մեջ են: Զի բացառվում, որ մոտ ապագայում «Էմպատիա»-ում կգործեն մասնագիտացված մարզիչներ եւ մարզասարքերով հագեցած սրահներ:

#### - Հաճախ սթրեսային վիճակում գտնվող մարդիկ չեն հիշում սպորտի օգտակարության մասին: Առհասարակ, ինչպե՞ս հաղթահարել թուլությունը, ծուլությունը, ինչպե՞ս կամքի ուժ գտնել սպորտով պարավունքի համար:

- Թուլությունը, ծուլությունը, կամքի ուժի բացակայությունն այն արդարացումներն են, որոնցով մարդը ընդարկում է իր՝ այս կամ այն զբաղմունքով զբաղվել չցանկանալը: Նման դեպքերում մեծ դերակատարություն ունեն շրջապատի մարդիկ, ծնողները, ընտանիքի անդամները, ընկերները, կոլեգաները, որոնք կարող են ուղղորդել տվյալ մարդուն մարզասրահ, լողի կամ էլ հոգեբանի մոտ: Հոգեբանը կօգնի, որ այցելուն իր մեջ գտնի ամենակարեւորը՝ ցանկությունն ուրեւէ զբաղմունքով զբաղվելու: Եթե կա ցանկություն, այն պետք է հասունացնել, իսկ հասունացած ցանկությունն արդեն նպատակ է, որը մնում է իրագործել:

Սթրեսային կամ ընկճվածության վիճակում մարդիկ ձգտում են սովորաբար մեկուսանալ աշխարհից: Մինչդեռ այդ շրջանում կարեւոր է գտնել հոգեհարազատ զբաղմունք: Եթե սպորտն է պատկանում այդ շարքին, ուրեմն դա որոշումն է: Այստեղ կարեւոր շատ գործոններ կան եւ օբյեկտիվ, եւ սուբյեկտիվ՝ շփման շրջանակի ընդլայնում, նոր հետաքրքրությունների առաջացում, նորանոր գիտելիքների եւ նպատակների ձեռքբերում, մթնոլորտի փոփոխություն եւ տանջող մտքերից հեռացում, ազրեսիայից, գայրույթից եւ այլ քայքայիչ հույզերից ձեռքազատում: Իհարկե,

շատ բան կախված է նրանից, թե ինչ մարզածե կամ պարավունքի ինչ տեսակ է ընտրված: Կարեւոր է՝ մարդուն ինքնուրույն ընտրություն կատարելու հնարավորություն տալ եւ խնայազարե:

#### - Ինչքանո՞վ է կարեւորվում հոգեբանական կայունությունն ու դերը մարզական ֆեդերացիաներում:

- Մեր հանրապետությունում, որքանով տեղյակ ենք, այդ խնդիրը արդիականացված չէ, բայց մենք ունենք այլ երկրների օրինակներ: Հոգեբանի առկայությունը մարզական ֆեդերացիաներում կամ ցանկացած մարզական խմբակում այնքան է կարեւորված, որքան բժշկի եւ մարզիչի դերը: Կան դեպքեր, երբ յուրաքանչյուր պրոֆեսիոնալ մարզիկ ունի իր անհատական հոգեբանը: Հաճախ է պատահում, որ պրոֆեսիոնալ մարզիկները փառքի եւ ճանաչման բերկանքը չեն կարողանում ճիշտ մարտել, ի հայտ է գալիս բարձրացված ինքնագնահատական, որը առաջ է բերում շեղումներ: Հանդիպում է նաեւ հակառակ դեպքը, երբ նպատակասլաց մարզիկը մասնապատասխան տարիներից անդադար աշխատում է իր վրա, զանազան դիտարկում եւ սահմանափակված կենսակերպ է վարում հաճախ հաղթանակի, բայց հանգամանքների բերումով հաջողությունը շրջանցում է նրան եւ նա հեշտությամբ կոտրվում է՝ չցանկանալով այլեւս պարավունք: Նման բեկումնային դեպքերի համար եւ, առհասարակ, մարզիկի առօրյա կյանքում հոգեբանի դերն ուղղակի պահանջված է: Շատ կարեւոր է մարզիկի կյանքում հոգեբանական պատրաստվածությունը: Իսկ ինչ վերաբերում է սիրողական բնույթի պարավունքներին, այստեղ մոտեցումը փոքր-ինչ այլ է: Նախեւառաջ՝ փոփոխությունները կատարվում են ավելի դանդաղ: Որպեսզի սովորեցնենք մեզ պարբերաբար հաճախել լողավազաններ եւ մարզասրահներ, առաջին հերթին մենք պետք է հստակ նպատակ դնենք մեր առջեւ, որը կօգնի հաղթահարել ծուլությունը, թուլությունը: Դա նշանակում է, որ պարավունքների հենց սկզբից սիրողական մարզիկը դառնում է ավելի նպատակասլաց, սկսում է կարգապահություն ձեւավորել իր մեջ՝ առօրյա գրաֆիկ ներառելով պարբերական մարզումները: Հունի մեջ ընկնելով՝ մարդ սովորում է հաղթահարել ինչպես ֆիզիկական թուլությունները, այնպես էլ հոգեբանական խնդիրները: Արդյունքում՝ բարձրանում եւ բալանսավորվում է ինքնագնահատականը. մարդ սկսում է իրեն հանգիստ, ներդաշնակ եւ ավելի լավ զգալ:

Ճիշտ մոտեցման եւ համապատասխան ընտրության դեպքում սպորտն օգնում է պահպանել ֆիզիոլոգիական եւ հոգեկան առողջությունը եւ զարգացնել մեր մեջ այն հիանալի անձնային հատկանիշները, որոնք մասին երազում է մեզանից յուրաքանչյուրը:

Սոկրատես

### Անհավանական բնորոշումներ

**Քրեմլ** - դրամ կորզելու միջոց՝ առանց կոպիտ ուժի գործադրման:

**Դիտա** - սովանահ լինել՝ մի քիչ երկար ապրելու համար:

**Տնտեսում** - դրամ ծախսելու արվեստ՝ առանց դրանից որեւէ բավականություն ստանալու:

**Պետ** - մարդ, ով ժամանակին է աշխատանքի գալիս այն օրը, երբ դուք ուշանում եք, եւ ուշանում է այն օրերին, երբ դուք գալիս եք ժամանակին:

**Սահվան ճառագայթ** - հայացք, որ կինը

հառում է իր նման հագնված մեկ այլ կնոջ վրա:

**Դիվանագետ** - մարդ, որն ընդունակ է համոզելու իր կնոջը, թե մուշտակը գիրացնում է իրեն:

**Տնային ծառայող** - կին, որ տնային աշխատանքները կատարում է վարձատրությամբ (իսկ ով դրանք կատարում է անվճար, տանտիրուհի են անվանում):

**Բուհ** - ուսումնական մեծ հաստատություն, որտեղ կարող են ընդունվել ու սովորել բոլորը (բացի թոշակառուներից), ովքեր

ունեն անձնագիր, դիպլոմ ստանալու ցանկություն ու, կարելի է, ուսման վարձը աղավաղի մոծելու հնարավորություն:

**Ուսանող** - ուրախ ու անհոգ երիտասարդ, որը, չնայած «խիստ» զբաղվածությանը եւ «կեղծ» հիվանդությանը, որպես կանոն՝ քննությունների ու ստուգաթղթերի օրերին ներկայանում է ճիշտ ժամանակին:

**Թոշակառու** - մարդ, ով իրավունք ունի երկար տարիների իր համեստ թոշակն ազատորեն ստանալու, տեղում հաշվելու, տանը նորից ու նորից հաշվելու, որոշ մա-

սը թոռնիկին կամ թոռներին «նվիրելու», որոշ մասով կոմունալ ծախսերը հոգալու, մի քանի հարյուր դրամ գրպանում պահելու, բակում հավաքված հասակակիցների հետ նարդի, դոմինո խաղալու, հոգնելու, հորանջելու, տուն գալու, բազմոցին պառկելու, անցած-գնացած երանելի օրերը վերհիշելու: Ու այս ամենը՝ առանց փողի, առանց դողի: Բա՛... Ազատությունն է, չէ՛... Երջանիկ ծերություն:

Միքայել ԲԱԼՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ  
Ստեփանակերտ, Կոմունյանց 17,  
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com  
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արձարձված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԿ ԴԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Փինը՝ 100 դրամ:

Խմբագիր  
Ա. Պուլուզյան